

“Droschak”

ORGANE

de la Fédération

Révolut. Arménienne.

ԴՐՈՇԿԿ

Adresse :

Rédaction du “Droschak”

GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՂՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ



ԿՈՒՌՈՒԲԱՇԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԸ

21/2 ՅՈՒՆԻԱՐ 1898

(Տես նրա 35)

ՆՇԱՆԱԽՈՐ ԵՒՐՈՊԱՅԻՆՆԵՐՈՒ ԿԱՐԾԻՔԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԻ ՄԱՍԻՆ

«Դրօշակ»-ի խմբագրութիւնը մարտ 27 թւակիր գրութեամբ մը դիմած էր եւրոպական քանի մը յայտնի և հեղինակաւոր անձերու, խնդրելով անոնցմէ որ իրենց ձայնը բարձրացնեն հայկական խնդիրը քաղաքականութեան օրակարգն անցնելու, օգտուելով զինաթափութեան խորհրդաժողովին մօտալուտ գումարումէն:

Այդ առթիւ խմբագրութեան ստացած պատասխաններէն ստորև կը հրատարակենք հանրածանօթ Ռիչչիոթի Գարիբալդիի և Ամիլիար Զիպրիանիի նամակները:

Առաջինը, ինչպէս յայտնի է, անմահ Գարիբալդիի որդին է, իտալացի նշանաւոր գործիչ և անդամ իտալական խորհրդարանին: Իսկ երկրորդը՝ նմանապէս մեծ անուն ունի իտալական ազգին մէջ: 1897-ին երկուքն ալ իտալացի կամաւորներու գլուխն անցած, փոքրիկ Յունաստանին օգնութեան գացին թիւրքերուն դէմ կռուելու համար: Զիպրիանին այդ կռուին մէջ ծանր կերպով վիրաւորեցաւ, արժանանալով ազատութեան բոլոր բարեկամներուն ցաւակցութեանը և հրաւիրելով իր և իր մեծանուն ընկերոջ վրայ բովանդակ աշխարհին սքանչացումը:

Տպագրելով այդ երկու ականաւոր մարդասէրներուն կարծիքը մեր դատի մասին, պարտք կը համարինք հրապարակով իրենց յայտնել «Դաշնակցութեան» համակրական խորին զգացումները:

Egregio Sig. Direttore

del DROSCHAK

Credo assolutamente inutile rivolgersi alla Conferenza per la Pace.

Il fatto che questa ha luogo per iniziativa dell'autocrate Russo — il quale mentre predica pace distrugge quel poco di libertà che ancora esisteva nel suo vasto impero, parlo della Finlandia — è segno sicuro che questa sua proposta nasconde un irisidia a danno della giustizia, libertà e indipendenza dei popoli.

Gli Armeni, come altri popoli che oggi subiscono la tirrania turca, devono — se vogliono essere liberi — domandare quest'atto de giustizia e umanità con l'arma alla mano.

In questo modo solamente si può forzare la diplomazia Europea, ad ascoltare la voce dei popoli infelici.

E in questo senso io e i miei amici, siamo a disposizione del disgraziato popolo armeno, che ha tutta la nostra simpatia.

Credetemi sempre vostro sincero amico.

RICCIOTTI GARIBALDI.

27 mars 99.
Roma.

Chers Citoyens,

Je m'empresse de répondre à la hâte à votre lettre du 24 mars, pour vous remercier d'abord de vous être souvenus de moi, ensuite pour vous dire franchement ce que je pense de la question arménienne.

La question arménienne, si elle est pour nous et pour tous ceux qui ont du cœur question humanitaire au dernier degré, si elle est un long martyrologe émouvant et digne, non seulement d'intérêt, mais d'amour et de pitié profonde, elle n'est pas telle pour les politiciens froids et féroces qui gouvernent aujourd'hui l'Europe.

Les massacres épouvantables, inouis, féroces, infâmes et scélérats de 94-96, et qui ont ému tout le monde, les ont laissés froids et indifférents.

Յարգելի պ. տնօրէն Դրօշակի

Բացարձակապէս անօգուտ կը կարծեմ խաղաղութեան խորհրդաժողովին դիմելը:

Այն իրողութիւնը որ այդ ժողովը ուսու ինքնակալին նախաձեռնութիւնով կը կատարուի որ խաղաղութիւն քարոզած պահուն իսկ, կը քանդէ իր ընդարձակ կայսրութեան մէջ գոյութիւն ունեցող քչիկ մը ազատութիւնն ալ — ֆինլանդան ըսել կ'ուզեմ — ստոյգ ապացոյց մըն է թէ իր առաջարկութեան ներքեւ ծուղակ մը թաքնած է իմաստ ժողովուրդներու արգարութեան, ազատութեան և անկասկածեան:

Հայերը, ինչպէս և միւս ժողովուրդները՝ որոնք այսօր թիւրքիոյ բռնութեան լուծը կը կրեն, եթէ ազատ ըլլալ կ'ուզեն, պէտք է այդ արդարութեան և մարդկայնութեան գործը պահանջեն զէնքը ձեռնունին:

Այս կերպով միայն կարելի է զօրը դնել եւրոպական դիւանագիտութիւնը, որպէսզի լսէ թշուառ ժողովուրդներու ձայնին:

Այսպէս ըլլալով՝ ես և իմ բարեկամներս մենք մեզ տրամադրութեան տակ կը դնենք դժբախտ հայ ժողովուրդին, որուն հետ է մեր բոլոր համակրութիւնը:

Հաւատացէք միշտ անկեղծ բարեկամութեանս:

ՌԻՉՉԻՍԹԻ ԳԱՐԻԲԱԼԴԻ.

27 մարտ 99
Հռոմ.

Սիրելի քաղաքացիներ,

Կը փութամ շտապով պատասխանել ձեր 24 մարտ նամակին, նախ՝ շնորհակալութիւն յայտնելու որ զիս յիշեալ էք, յետոյ անկեղծօրէն ըսելու համար իմ մտածումս հայկական խնդրի մասին:

Հայկական հարցը, եթէ մեզի և բոլոր սրտի տէր մարդոց համար վերին աստիճանի մարդասիրական հարց մըն է, եթէ երկար ու սրտայոյզ վկայաբանութիւն մըն է ան, արժանի ոչ միայն շահեկանութեան, այլև սիրոյ և խորին գթութեան. այդպէս չէ պաշտ և վայրագ քաղաքականներուն համար, որոնք կը կառավարեն այսօր եւրոպան:

94-96-ի զարհուրելի, անլուր, խուժ, տմարդի և եղեռնային կոտորածները որոնք յուզեցին արարաշխարհ սառն ու անտարբեր ձգեցին զանոնք:

A vos cris de détresse, aux râles des égorgés, aux gémissements des persécutés, des emprisonnés, les Cabinets ont envoyé des notes insignifiantes sachant d'avance que l'assassin Abdul-Hamid n'en aurait tenu aucun compte.

Votre sang leur a éclaboussé le visage, ils n'ont pas bougé; ils n'ont pas bougé à l'incendie de vos villes, de vos maisons, ils vous ont laissés égorger sous leurs yeux, parce que tous convoitaient de partager la Turquie, mais tous pensaient se faire la part du lion. Cela n'étant pas possible, le martyr d'un peuple disparaissait devant leur convoitise déçue.

Du reste, les soi-disant six grandes puissances se moquent des faibles, et dans la guerre greco-turque ont joué le rôle infâme des gendarmes de Turquie contre la petite Grèce.

Oui, l'Europe a été la complice de votre assassin; oui, elle s'est rendue solidaire avec les Kurdes. Elle a préféré avoir les mains baignées dans votre sang, que toucher à un trône, même lorsque sur ce trône il y avait un vulgaire malfaiteur, un brigand, un criminel.

Après ces tristes preuves, vous n'avez rien à espérer de l'Europe dite civilisée.

Elle vous a abandonnés dans un moment tragique, lorsque le yatagan turc vous fauchait par milliers, et que les peuples d'Europe étaient avec vous.

Il y a, oui, une proposition de désarmement qui ne sera pas acceptée d'abord, ensuite s'ils l'acceptaient, ce serait pour mieux vous mitrailler demain, car le partage de la Chine et de l'Afrique ne se feront pas par les voies pacifiques; et, dans ce Congrès composé d'êtres assoiffés de sang et de rapine, votre cri de justice n'y arrivera pas, personne n'osera en parler, personne n'en parlera.

Il ne faut donc pas que vous espériez quoi que ce soit de l'Europe. Elle est contre vous, elle vous l'a déjà prouvé, et vous le prouverait encore à la première occasion.

Je n'ose pas vous dire que les peuples ne doivent espérer, avoir confiance qu'en eux-mêmes.

Les gouvernements d'Europe, si jamais ils prenaient votre défense — chose impossible — vous apporteraient le servage par la liberté.

Celle-ci on la conquiert en combattant, en la baignant de son sang.

Les peuples opprimés n'ont qu'un droit, droit incontestable: la révolte.

Si vous avez les moyens de la préparer intelligemment, comptez sur moi, sur mon concours.

A vous de cœur.

A. CIPRIANI.

111, rue Réaumur.

PARIS, ce 4 IV 99.

Ձեր տագնապալից ճիշերունք խոյլսողածներուն հոշոտիւններուն, հալածածներուն ու բանտարկածներուն լաց ու կոծանքին վրայ, դահլիճները նշանակութենէ զուրկ ծանուցարներ խրկեցին, նախապէս գիտնալով որ մարդասպան Աբդուլ-Համիդ կարեւորութիւն անդամ պիտի չտար:

Ձեր արիւնը անոնց երեսը ցայտեց, ձեր քաղաքները, տունները կրակի տուեցան, անոնք տեղերէն չերեքացին. ձգեցին ձեզ, աչքերնուն առջև, որ փողոտեն, որովհետև ամէնքն ալ Թիւրքիան բաժնելու չար ցանկութիւնը ունէին, բայց ամէն մէկը կը մտածէր առիւծի բաժին ստանալ: Կարելի չէր աս, ու ժողովրդի մը նահատակութիւնը կ'անհետանար յուսալքեալ աչքածակութեան մը առջև:

Մնաց որ՝ իրենք դիմեցէ մեծ կոչող վեց տէրութիւնները կը ծիծաղէին տկարներուն վրայ: Յունա-թրքական պատերազմին մէջ փոքրիկ Յունաստանի դէմ Թիւրք ժանդարմներու խայտառակ դերը խաղացին անոնք:

Այո, Եւրոպան ձեր սպանչին մեղսակիցը և քիւրդերուն հետ համերաշխ եղաւ: Ան (Եւրոպան) նախագահեց ձեր արիւնին մէջ թաթաւ ձեռքեր ունենալ, քան ձեռք դպցնել գահուն մը, նոյնիսկ երբ այդ գահուն վրայ կը բազմէր գոեհիկ շարագործ մը, աւազակ մը, եղեռնագործ մը:

Այս տխուր փորձերէն ետքը ալ քաղաքակիրթ ըսած Եւրոպայէն յուսալիք բան չունիք:

Ողբերգական ըրպէի մը մէջ ան երեսի վրայ ձգեց ձեզ, երբ թրքական եաթաղանը ձեզմէն հազարաւորներ կը մանգդէր, թէն Եւրոպայի ժողովուրդները ձեզի հետ էին:

Իրաւ է, զէնընկեցութեան առաջարկ մը կայ, որ նախ ընդունելի պիտի չըլլայ, յետոյ եթէ ընդունուի ալ վաղը ձեզ աւելի լաւ կ'երպով գնդահար ընելու համար է, որովհետև Ձինստանի և Ափրիկէի բաժանումը խաղաղ ճամբով չպիտի կատարուի: Եւ այս խորհրդածողովին մէջ՝ որ բաղկացած է արիւնի ու գողտափշտակութեան ծարաւի մարդերէ, ձեր արդարութեան ճիշդ պիտի չհասնի. մարդ պիտի չհամարձակի բերան բանալ անոր մասին, ոչ ոք ձայն պիտի հանէ:

Եւրոպայէն որեւէ բան մը յուսալու չէք ուրեմն: Ան ձեզի դէմ է փորձով ցոյց տաւ արդէն ձեզի և առջին առիթը ներկայացածին նորէն պիտի տայ փորձը:

Ձեմ համարձակիր ըսել թէ ժողովուրդները պէտք չէ յուսան, թէ յոյսերնին իրենք իրենց վրայ դնելու են միայն:

Եւրոպական կառավարութիւնները եթէ երբեք ձեր պաշտպանութիւնը ձեռք առնէին — անկարելի բան — ազատութեան միջոցով ստրկութիւն պիտի բերէին ձեզ:

Ազատութիւնը կուելով և զայն արիւնով լողցնելով ձեռք կը ձգուի:

Հարստահարած ժողովուրդները մէկ իրաւունք միայն ունին, անվիճելի իրաւունք — ապստամբութիւնը:

Եթէ դուք խելամոռեւ զայն պատրաստելու միջոցները ունիք, վստահ եղիք իմ վրայ, իմ աջակցութեանս վրայ:

Սրտանց ձերդ

ԱՄԻԼԿԱՐ ՉԻՊՐԻԱՆԻ

Յ Ա Ղ Թ Ա Ն Ա Կ Ը Կ Ռ Ի Ո Վ

«Միայն մի մարդ աշխարհիս երեսին կարող էր ֆրանսիական յեղափոխութեան առաջն առնել, այն է՝ Ադամ, եթէ խեղդէր Եւայի ստեղծելուց առաջ» — ասելէ մի խելօք հրապարակաօս՝ ցոյց տալու համար այդ պատմական դէպքի անհրաժեշտութիւնը:

Նոյնը կարելի է ասել և բոլոր յեղափոխութիւնների մասին, որովհետեւ ամէն մի շարժում, որ արժանի է այդ անւան, պատրաստելով տասնեակ տարիների ընթացքում և ամբողջ սերունդների գործակցութեամբ, առաջ է գալիս որոշ պատմական ընդհանուր իրեր մի երևոյթ, որ կատարելու է անխուսափելի կերպով:

Եւ այդպէս անհրաժեշտօրէն տեղի է ունենում ժողովրդական յեղափոխութեան ոչ միայն ծագումը, այլ և զարգացումը՝ իր գլխաւոր մօմէնտներում, որովհետեւ յեղափոխական շարժումը, սկիզբն առած լինելով անդառնալի անցեալում և արդէն ստացած լինելով որոշ ուղղութիւն, յառաջ է ընթանում իբրեւ մի տարերային հոսանք, անկախ՝ իր խոշոր գծերում՝ այս կամ այն անհատի կամայականութիւնից և ենթակայ միմիայն որոշ սօցիօլօգիական օրէնքների, որոնցից մէկը՝ կարելի է համարել ամէնահիմնականը, այն է, թէ մի ստորակ ժողովուրդ նախ քան յաղթական ապստամբութիւնը ծաղատագրօրէն պէտք է անցնի մասնակի և կիսայաջող կամ անյաջող կռիւների շրջանով:

Այդ տարրական ճշմարտութիւն է ամէն մէկի համար, որ թէկուզ հարեանցօրէն ուսումնասիրել է զանազան ազգերի մէջ կատարած յեղափոխութիւնները, բայց կան գլուխներ, որոնք անընդունակ են մարսել նոյնիսկ տարրական ճշմարտութիւններ և ահա մեր մէջ պարբերաբար դուրս են գալիս զանազան անկիւններից *soi-disant* քննադատներ և իբր-յեղափոխականներ՝ պարզամիտ յարձակումներով և երեսայական ծրագիրներով, որոնց էական միտքն այն է, թէ հայ ազգը կարող էր և կարող է մեռած ձեւանալ և լուռ ու մունջ պատրաստել մի օր յանկարծ միահամուռ ապստամբութիւն բարձրացնելու. կարծես թէ՝ ժողովրդական յեղափոխութիւնը պաշտական դաւադրութիւն է, որ պարագլուխները կարող են ձեռքի տակ պատրաստել, նախապէս բաժանելով դերերը՝ ինչպէս մի թատրօնական ներկայացման մէջ, որպէս զի յետոյ պայթեցնեն որոշւած ընդհանուր և ուղած պայմաններում:

Պէտք է միամիտ լինել՝ կարծելու համար, թէ ժողովուրդը կարող է քնել ստորակ և զարթնել ազատ: Ստորութիւնը օձի շապիկ չէ, որ կարելի լինի միանգամից փոխել: Նա մտնում է ժողովրդի հոգու մէջ, նա ստորացնում է զգացումները, նա փչացնում է բնաւ-

րութիւնները, և ահա՝ որպէս զի մի ստրկացած ժողովուրդ կարողանայ ազատութիւն ձեռք բերել, նա ոչ միայն պէտք է տարիների ընթացքում սովորի գնահատել ազատութիւնը, զգալ նրա անհրաժեշտութիւնը իր բոլոր նեարդերով, այլ և պէտք է կազմակերպւի, որպէս զի կարողանայ ջախջախել կազմակերպւած թշնամուն: Իսկ այդ չի կարող կատարել միմիայն լրագրական քարոզով և ծածուկ դաւադրութիւններով, առանց կռիւի, առանց՝ գործի միջոցով պրօպագանդայի: Ազատութիւնը չի ընդունում պլատօնական սէր. նրան կարելի է սիրել միայն իրական սիրով, որ չգիտի տարբերութիւն խօսքի և գործի մէջ: Այն ժողովուրդը, որ ընդունակ է կարգալ ներքոյներ ազատութեան և լուռ տանել բռնակալութիւն, նա կորած է ազատութեան համար, նա անընդունակ է յեղափոխութիւն անել:

Առհի և միմիայն կռիւ միջոցով կարող է մի ժողովուրդ պատրաստել յաղթական պատերազմի համար: 2կայ ոչ մի դահլիճ, ուր կարելի լինէր խաղաղ կրկնութիւններ անել ապագայ ապստամբութիւնների համար: Յեղափոխական բանակները կազմակերպւում և վարժուում են ոչ զօրանոցներում և ոչ զօրախաղերով, այլ հայդուկային խմբերում և պարտիզանական կռուում: *Durch Kampf zum Sieg* (կռուով դէպի յաղթանակ) եղել է բոլոր յեղափոխականների նշանաբանը: Առհի յարատեւ, կռիւ անընդհատ, յաճախ՝ անյաջող: 2կայ ոչ մի ազգ, որ նախ քան ազատելը անհրաժեշտօրէն անցած չլինի փոքրիկ և վիժւած բռնկումների բովով: Այդ բռնկումների միջոցով է կատարւում ստրկացած ժողովրդի հոգեբանական էւօլիցիան, նրանց մէջ է մխում նրա յեղափոխական ոգին, նրանց շնորհիւ է նա սովորում գնահատել և գործածել զէնքը, որ անօգուտ գործիք է յեղափոխական դպրոց չանցած ըստրուկ ժողովրդի ձեռքում:

Այդ է յեղափոխութիւնների անխուսափելի օրէնքը, որ հայ գործիչները անզօր են փոփոխել և որին նրանք պէտք է միայն համակերպւեն: 2ենք ուզում ասել իհարկէ, թէ նախատեսութիւնը և շրջահայեցութիւնը դեր չունեն կատարելու յեղափոխութեան մասնաւոր գործառնութիւնների մէջ և թէ չպէտք է ձգտել յեղափոխութեան մէջ՝ որքան կարելի է՝ խնայել ժողովրդի արիւնը: Ոչ, մենք ուզում ենք միայն մի աւելորդ անգամ ևս շեշտել այն ճշմարտութիւնը, թէ Աւետեաց աշխարհը առաջնորդող լուսաւոր ամպը միշտ անցնում է արեան Կարմիր ծովի և Սինայի անապատի վրայով և թէ միայն վատերը կարող են փստոսալ Եգիպտոսում թողած ստրկական կեանքը և անարգել այն մարդկանց, որոնք դուրս հանեցին նրանց այդ կեանքից:

ԵՐԿՈՒ ԿՐԱԿԻ ՄԵՋ

I

Դարձեալ սովի լուրեր...

Երկու շաբաթից ի վեր, սկսած այն օրից, երբ ծանօթ հայասէր Վէստմինստրի դոքսը հրաւեր կարգացանդիական ազգին՝ մի միլիօն մատակարարել հայկական նահանգների ժողովուրդը սովմահ իննելուց ազատելու համար, փակեալ բերանները բացեցին, և ահա՛ ամէն օր հիւպատոսներն ու նրանց հետ միասին եւրօպական լրագիրները ստիպում են մեզ՝ յուզեալ սրտով կարգաւ սովի սրտակտուր լուրերը, լուրեր՝ շատ հին և շատ ծանօթ...

— Միթէ դարձեալ հաց չկայ, բացառանքում է բարեսիրտ, եթէ չասենք միամիտ, եւրօպացին. — չէ՞ որ փող հանգանակեցին, կոմիտներ կազմեցին, վերջապէս ընթերցանների ծրագիր մշակեցին...

«Միթէ դարձեալ հաց չկայ» — որպիսի հեղուկութիւն: Բայց միթէ մոռացաւ եւրօպան, որ հացը աւերակ տների մէջ չի բուսնում և ոչ էլ ոռոգում կարմիր արիւնով: Նա բուսնում է միայն այնտեղ, ուր արեան փոխարէն աշխատաւոր շինականի հալալ քրտինքն է հոսում, այնտեղ, ուր սուրի և դաշոյնի փոխարէն՝ արեգակի կենդանացուցիչ ճառագայթների տակ պսպրում են գերանդին և մանգաղը, խոփը և ձեւիչը...

Հայը չունի այլևս ոչ խփ, ոչ ձեւիչ, ոչ գերանդի և ոչ մանգաղ: Այդ մանգաղով համդիական քերդը նրա աշխատող ձեռքն է կտրում, իսկ շինականի խոփը և գերանդին՝ բռնութեան քուրաներում վերածուլած՝ դարձել են սուր և քրւնդ, որոնցով սուլթանի զինւորները կտրում են ոչ միայն հայի ձեռքը, այլ և աւերում այդ ձեռքով շէնացրած տունը և եկեղեցին, արտը և այգին...

Հինգերորդ տարին է արդէն, որ ամբողջ Հայաստանում քրտինքի փոխարէն կարմիր արիւն է հոսում: Տաս տարուց աւելի է, որ իր խրճիթից վաղ առաւօտեան դուրս եկող հայը՝ քայլերը ուղղում է ոչ թէ դէպի դաշտը՝ իր դաւակների համար հաց ցանելու, այլ դէպի օտար, անծանօթ, շատ անգամ անհիւրընկալ երկիրներ՝ օգնութիւն մուրալու, աշխատանք, գործ, ապրուստ ճարելու: Երկիրը դատարկեալ է աշխատող ձեռքերից, ամբողջ գիւղեր և շրջաններ այլևս չունեն մաճ բռնող երիտասարդ ուժեր, — նրանք կամ հալածեալ են կամ կոտորեալ, — իսկ «ամենագէտ» եւրօպան շարունակում է միամտաբար հարցնել՝ «Միթէ դարձեալ հաց չկայ...»

Ներկայ ժամանակը հրաշքների ժամանակ չէ, և այդ պատճառով ոչ հացը և ոչ սովը երկնքից չեն իջնում՝ ինչպէս մանանայ կամ ինչպէս աստուածային պատիժ: Երկուսն էլ ծնւում են հողից, երկուսն էլ արդիւնք են «աշխատանքի»... — մէկը արդիւնաբերող, մշակող, ծլեցնող աշխատանքի, որ յատուկ է քրտինք թափող, հողին կպած ժողովրդին, միւսը՝ ամէն ինչ ամայացնող, քանդող, հալածասէր բռնութեան, քայքայիչ կառավարութեան: Այնտեղ, ուր չկայ առաջինը, այնտեղ միշտ կանգուն է երկրորդը: Եւ այն օրից, երբ հայ ժողովուրդը բռնաւոր և սպանիչ թիւրք կառավարութեան ձեռքով խեղճ քրտնի իր բնիկ տնից և իր սեփական արտերից, որպէս զի այդտեղից էլ՝ «քրիս-

տոնեայ» կառավարութիւնների շնորհիւ միանգամայն տարագրւի դէպի օտար երկիրներ, այն օրից Հայաստանը դարձաւ սովաւոր:

Ցոյց տւէք 1878 թից, այսինքն այն օրից, երբ թիւրքաց կառավարութիւնը պաշտօնական կռիւ յայտարարեց հայ տարրին, մինչև այսօր մի հատիկ տարի, երբ սով չի ներ Հայաստանի որ և է գաւառում կամ նահանգում: Այդպիսի տարի այս քսան տարւայ պատմութեան մէջ՝ գոյութիւն չունի: Տարբերութիւնը նրանում է միայն, որ հալածանքի և բռնութեան մասնակի շրջանում՝ սովը էլ մասնակի էր, յատուկ մի նահանգի կամ մի վիլայէթի, իսկ երբ հալածանքը և կոտորածը դարձաւ ընդհանուր, ինչպէս վերջին հինգ տարին, սովը էլ ընդհանուր կերպարանք առաւ... Ուրիշ բան անկարելի էր սպասել...

Ասիական խաւարում կուտուրայի խաչը իր թոյլ ուսերին վերցրած, պատիւ և արդարութիւն պահանջող ամբողջ ժողովուրդ կոտորեց, նրա դաշտերը և սեփականութիւնը բաժանեցին քիւրդին և թիւրքին, իսկ այսօր այդ բոլորի սառնասիրտ վկան, դարեւիրտ՝ եւրօպան հանգանակութիւններ է անում՝ քաղցածներին սովի ճանկից ազատելու համար... Եթէ խեղճ հայ ժողովրդի ձայնը Հայաստանի խորքերից ուղղակի եւրօպայի ահանջին հասնէր, նա կը գոչէր. «Չեմ ուզում քո նպաստը, ես մուրացկան չեմ. վերադարձրու ինձ իմ հայրենիքը, իմ օջախը, իմ յափը՝ տակաւ մալը, տուր ինձ ազատութիւն վայելելու իմ աշխատանքի պտուղը՝ ես ինքս ինձ կը կերակրեմ, ես ինքս կը պահեմ իմ որդիներն և սովեալներին: Ես քեզանից ազատութիւն եմ պահանջում և ոչ թէ դրամ...»

Միթէ եւրօպան չի լսում այդ ձայները...

II

Ո՛չ, չի լսում. նա վրադաւ է որբանոցներով, ժամանակակից «մարդասիրութեան» այդ փոքրիկ արձաններով: Տարաբախտաբար այդ հարցումն էլ մալը դասէր եւրօպային վիճակած է ենթարկել թիւրքական անսպառ ծաղրին և Արդիւ Համդի հանձարեղ հեղուկութեան: Եւ ահա հէնց այն միջոցին, երբ միսիօնարները և միսիօնարութիւնները մարդասիրաբար իրենց ապաստարաններում փախալու էին հօրից և մօրից զրկեալ՝ քաղցած և սառած խարբերդցի, վանեցի, մշեցի և սերաստացի մանուկներին, օսմանեան կառավարութիւնը՝ լրբութեան սահմանից անցած աներեսութեամբ դուրս է քշում երկրից, իբրև վտանգաւոր տարրեր, անմեղ մանուկներին խնամող ձեռքերը և փակում որբանոցները...

Փակել որբանոցները, — ահա այն նորութիւնը, որ Կ. Պօլսի բռնապետութիւնը, իրեն յատուկ հանձարով ստեղծագործեց և մտցրեց 19-րդ դարի պատմութեան մէջ, հասկացնելով քաղաքական եւրօպային, որ ոչ ոք, ոչ մի պետութիւն, նոյնիսկ այնքան հզօր, որքան Անգլիան, և ոչ մի եկեղեցի, նոյնիսկ այնքան զօրեղ, որքան Լուծերի հիմնած եկեղեցին, բնաւ իրաւունք չունեն իր բռնութեան սահմաններում խնամք մատակարարել երեխաներին անգամ, որոնց միակ յանցանքը այն է, որ... հայր և մայր են ունեցել: — Այդ

անմեղ երեսխաները, մտածում է թիւրք կառավարութիւնը, կը մեծանան որքանոցներում, մաւրդ կը դառնան, կը յիշեն իրենց հայրերին և լիւաժ մայրերին, կը տեսնեն արիւնքամ հայրենիքը և կրկին ձայներ կը բարձրացնեն: 2է. դա վտանգաւոր է... պէտք է սովորեցնել անել որբերին, պէտք է փակել որբանոցները... Եւ փակում է անարգել...

III

Սակայն միայն որբանոցները չեն, որ փակուում են: Փակուում է մի ամբողջ երկիր: Հայկական կոտորածների հեղինակը վճռել է աւետել աշխարհին մի նոր թէօրիա, — այն, որ մի ամբողջ ազգ կարող է հայրենիք ունենալ բայց այդ հայրենիքում տեղ չունենալ: 94-95 թվականներին, երբ հարիւր հազար ժողովուրդ, կոտորածների սպառնալիքի տակ, դուրս փախաւ դժբախտ հայրենիքից, ինչպէս յանկարծակիի եկած միջիններ, քանդուած միջնանոցից, օսմանեան կառավարութիւնը հրճեց, յիշելով իր մշտական նշանաբանը — որբան քիչ հայ՝ այնքան լաւ: Բայց այժմ, յիշատակաւ ազգը՝ ուղու է դառնալ հայրենիք, ուղու է նորից փորձել իր բախտը այն երկրի մէջ, որ իր սեփականն է, իր հարազատը: Սակայն դարձեալ արգելք, թիւրք կառավարութիւնը թոյլ չի տալիս. նա փակել է հայաստանը հայի առաջ ինչպէս փակեց որբանոցները որբերի առաջ:

Երկու տարի է, ինչ ուստաց կառավարութիւնը սպառնալից առաջարկութիւններ է անում սուլթանին, ծանուցագրեր է ներկայացնում, բացատրում է, որ կովկասը անկարող է կերակրել հայրենիքից փախած ահագին բազմութիւնը, վերջապէս ինքը իր կողմից քշում է գաղթականներին Կովկասի սահմաններից, — բայց անօգուտ: սուլթանի «հիւանդոտ» կառավարութիւնը դժուար է թուրքական կերակրում է նոյն խոստումներով, նոյն դրամով, որով նա ահա 10 տարի է կերակրում է եւրոպական կոնցերտը, և գաղթականները շարունակում են թափառել կովկասեան քաղաքներում, իրրեւ մուրացկաններ, անկարող ոտք դնելու իրենց վաթանի մէջ: Հայրենիքը անկարող է ընդունել իր տարաքիր զաւակներին, որովհետեւ նա փակած է ջրերը ձեռքով, որ կոչւում է սուլթանի ձեռք, և անկարող է բացել մի ուրիշ, իբր թէ աւելի ջրերը ձեռքով, որ կոչւում է Եւրոպայի ձեռք...

IV

Այսպէս ուրեմն՝ հայը հող ունի, բայց հաց չունի. որբանոցներ ունի, բայց ապաստան չունի: Ճա հայրենիք ունի, բայց տուն չունի:

Դա է ահա այն երկու կրակը, որի մէջ գտնուում է հայ ժողովուրդը թիւրքիայում: Երկար մնալ այդ երկու կրակի մէջ — նա անկարող է: Դա բարձր է մարդկային ուժից: Երկու ճանապարհ միայն կայ — կամ այրել, մոխիր դառնալ և քամու բերանը ընկած՝ անհետանալ աշխարհի երեսից, և կամ, հերոսական թոխից գործելով, դուրս նետել ստրկական բոցերի միջից և գիմել դէպի փրկարար օրը, դէպի սրբաւոր, դրաւիչ հեռանկար... Այո, երկու ճանապարհ միայն կայ, և մէկը գրանցից արդէն ընտրել է ժամանակակից հայը:

Գիտէ Եւրոպան, թէ որն է դա...

ԿՈՒՌՈՒԲԱՇԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐ

ՏԻԴՐԱՆ ՏԵՐՈՅԵԱՆ — ՎԱՋԳԷՆ

«Թառաւ, քաղաքակրթութիւնը միշտ զոհ է պահանջել մարդկութիւնից. փառք է մեզ, եթէ նրա արժանաւոր զոհը լինենք»:

ՎԱՋԳԷՆ (Կրօշուկ, 1896 № 19)

Կուռուբաշ... անէծքի, թէ փառքի անուն, այնտեղ ընկան Վազգէնի հետ Միքոն և Մրշակը, այնտեղ նա քաջերը...

Վանում հայ խանութպանին թակում էին թիւրք զինուորները: Խանութպանի բոլոր յանցանքը իր ապրանքի գինը պահանջելն էր, այդ իրաւունքին հակադրած էր թիւրք զինուորի աւելի ջորեղ իրաւունքը — նրա վայրենի ոյժը — և հային թակում էին անողորմ, անսիրտ ձեռով, ամբոխի մէջ, հայ բազմութեան առաջ: Մարդիկ նայում էին, զոհի ճիշդ կարեկցութիւն էր շարժում, բայց նրա փրկութիւնը համարձակութեան պէտք ունէր՝ կարեկցութեան զուգընթաց, սակայն այդ չկար՝ եւ բազմութիւնը նայում էր լուռ, սարսափահար: Մի դերձակի խանութի առաջ նստած մի հայ պատանի իր թաւ յոնքերի տակից նոյնպէս նայում էր իր մեծ սև աչքերով, ուր ասես փայլում էին ալէկոծ մաքեր, հոգու փոթորիկներ: Զինուորներն անողորմ էին, բազմութիւնը ստրկահոգի, թոյլ, վատասիրտ: Պատանին, նա ցած դրեց ձեռքի կարը, վեր ցատկից տեղից և սարսափած խելակորոյս բազմութիւնը տեսաւ, թէ ինչպէս կորովի պատանին հուժկու բռնկանքներով հարւածներ է թափում անամթ, անսիրտ զինուորների դէմ: Ընդհանուր շփոթ ու աղմուկ բարձրացաւ այս նորանշան դէպքից: անմեղ զոհը խոյս տուց, փրկեց, իսկ պատանին տեղի տուց միայն հետզհետէ վրայ հասնող բազմութեան առաջ:

Այս նոր Մովսէսը՝ Վազգէնն էր:

Դպրոցական ուսումը թերի թողած պատանի Յիգորանը (Վազգէն) հայ-բողոքական դերձակի մօտ աշակերտ էր մտած:

Վազգէնը դերձակի ֆաշակերտ...

Այն ձեռքը, որ իր սրտի ազնիւ ցնցումներին հըռ հպատակ իր հայրենիքի փրկութեան նւիրական գործի կուսաններից մէկը պիտի լինէր, հօր ցանկութեան համաձայն՝ հանդարտութեամբ շարժում էր ասեղը: Այն գլուխը, ուր այնքան ազնիւ մաքեր էին բուն դրած՝ ըստ պատկերով յարմար րոպէին, որ դուրս ցուանան իրենց բոլոր փայլով կուսած էր մի չնչին լաթի կտորի վրայ, կուսած՝ ծանր, խոհական ձեռով: Դժուար էր աւելի աններդաշնակ բան երեւակայել մի անձի կոչման, բնական հակումների և նրա պարապմունքի մէջ:

Եւ մատները ջղաձգաբար բռնում, ձմրում էին ռոգորմէլի լաթը, թուխ ճակատի տակ եռացող մաքերը սաւառում էին հեռու... հեռու... Երբ լեռը հրաբխային է, ինչով կարող ես չափ ու սահման դնել նրա հսկայական վիժման, երբ ծովը փոթորկալի է, ո՞վ կարող է քլերների թափը սանձահարել: Այդպէս էր Վազգէնի հոգին: Զինւորների գազանային վարմունքը իր հայրենակցի հետ գուցէ առաջինն էր, որ նրա կրտսի մէջ մթերւած յոյ-

զերի առաջին անգամ ժայթքումն առաջ բերեց: Այնուհետև իրար յաջորդող դեպքերը վերջնապէս Վազգէնին դրին յեղափոխական ծանր, փշալից, բայց վեհ ճանապարհի վրայ: Որքան անօրինակ էր իր գործունէութեան Կիլիկիայի, նոյնքան զարմանալի հերոսական եղաւ նրա շարունակութիւնն ու վախճանը:

Եթէ առաջին դեպքը, որ նրա գործունէութեան առաջին քայլը նշանակեց, վայրենի անարդարութեան դէմ արդար զայրոյթի մի նւիրական պոռթկումն էր, երկրորդ դեպքը, որ նրան վճռական ճանապարհի վրայ դրեց, իր երազած գործի, իր փայլալուծ մտքերի իրագործման համար՝ առաջին նահատակների մարտիրոսութիւնն էր, նրանց նւիրական արիւնն էր:

Վազգէնի հայրը վախճանւած էր, երբ Զուլ-գետուկի մէջ ընկան Գուրջեան և Ագրիպպասեան: Վերջինը Վազգէնի ամենասիրելի ուսուցիչն էր, որի «վերջին դասը», որքան զարմանալի, նոյնքան դիւթիչ եղաւ իր աշակերտի համար: Գուցէ այդ օրը Վազգէնը որոշեց հեռանալ իր արժանաւոր ուսուցչին:

Այդ ժամանակն էր, երբ նա երգեց իր առաջին խոր:

«Ի՞նչ, ո՞վ ցանկալի վան, իմ հայրենիք,

Սիրոյդ կարօտով մաշւիմ ես հերիք...»

Հերիք... որքան շատ բան է ասում այս մէկ հատիկ բառը. հերիք, դադար առ, չարիք. հերիք արցունք, լուռ հեծեծանք, հերիք ստրկութիւն, հերիք բռնութիւն: Հսկայի մի կոչ էր այդ բռնուն ու զօրեղ, դէպի իդէալ տաճած այն զարմանալի հաւատով, որ նրա ամբողջ գործունէութեան մէջ իր առաջնորդող աստղը, իր նշանաբանը եղաւ:

Գերձակի խանութը ձգելուց յետոյ՝ նա այլևս Տիգրան Տէրոյեանը չէ: Նա յեղափոխական այն փայլուն պատկերն է, որ Վազգէն է կոչւում: Նա այժմ ուսուցիչ է: Որպիտի թուի՞ք. գերձակի աշակերտը՝ ուսուցիչ: Բարձր մտքերը չէին կարող պարտակել խանութի չորս պատերի մէջ. նրանք ճանապարհ, ելք, թուի՞ք էին պահանջում: Բաներ կար, որ ասել էր հարկաւոր, կուրծքը ուռած էր, նա կը պայթէր, եթէ այրող յոյզերը դուրս չթափւէին:

Բռնութիւնը խեղաթիւրիչ է: Ժամանակներ կան, երբ ծեծւող մարդիկ ականջին պիտի փսփսալ թէ դքսի ծեծում են, որպէսզի նա հասկանայ, թէ մարմինը ցաւում է:

Վազգէնը ուսուցիչ էր, նա պրօպագանդիստ էր, նա կամաց կամաց բազմացնում էր այն մարդկանց թիւը, որոնց մարմինը ցաւ էր զգում, որոնց սրտերը տրոփում էին իր սրտի հետ, որոնք սոգորւած էին նոյն նւիրական մտքերով և զգացմունքներով, նոյն ցաւերով:

Հետզհետեւ Գրոշակում տպագրւած նրա նամակների, յօդւածների ու թղթակցութիւնների մէջ արտայայտւած մտքերն ու զգացմունքներն իրենց խորութեամբ, արդարութեամբ ու յանդուգն վճռականութեամբ միշտ զարմանք են յարուցել: Եւ այժմ, երբ այդ փայլուն կենսաբան անցաւ յեղափոխական կարմիր հորիզոնով՝ ինչպէս մի վա անց էլ փայլակ, որ սակայն ծակեց այնքան քաղաքական աչքեր, ցնցեց այնքան սրտեր, այժմ, երբ այդ մտքերն ու գաղափարներն իր իսկ արեամբ մկրտւած Ժողովուրդի միջոցին մեզ, նրա անշուշտ բառերը կենք և ոգի են ստանում, արձանանում մարդու աչքի առաջ, զարմանք և պատկառանք յարուցանելով:

95 թւից սկսած Վանից մինչև պարսկական սահմանը քանի քանի կռիւների է մասնակցել Վազգէնը: Այդ թւի հոկտեմբերին մենք նրան առաջին անգամ տեսնում ենք Սալմաստ. այստեղից դէպի Վան առաջնորդւող 60 հոգու խմբի մէջ է Վազգէնը. Սարայի կռոււմ նա իր խմբակով, մօտ 15 հոգի, կարողանում է թշնամու աչքերից խոյս տալ, մնում է միառժամ մանակ մարագում փակւած և ապա փորձւած պատերազմողի հմտութեամբ իր առաջնորդութեան հաւատացած այդ խումբը հասցնում է իր նպատակատեղին:

Վանի յայտնի կռիւց յետոյ Վազգէնը Պետոյի հետ՝ Վարագ է քաշւում, բայց կրկին վերադառնում է Վան, մասնակցում է Վանի երկրորդ կռիւն և չնայելով հանգամանքների արտասովոր դժուարութիւններին՝ Վանից չի հեռանում:

Պետոյի հեռանալով և մահաւոր Վանի յեղափոխական գործի ոգին, շարժող ուժը Վազգէնն էր: Խանասորից առաջ մենք նրան երկրորդ անգամ տեսնում ենք Սալմաստում, ապա Միքոյի խմբի Սպահան լճի մօտ մշած հերոսական կռիւն մասնակցելուց յետոյ՝ նա Վան է հասնում:

Այնուհետև 5-6 ամիս շարունակ Վազգէնի համար սկսում է մի կեանք, որի ամէն մի օրը, ամէն մի ժամը մի-մի անլուծելի հանելուկ է սովորական մարդո՞՛հ համար: Մարդ չգիտի այդ գործունէութիւնը նրա խելքին վերագրի, քաջութեանը՝ անօրինակ համարձակութեանը, ազատութեան սիրոյն, ծայրայեղ անձնուրացութեանը, աննկուն յեղափոխական ոգուն: Իրօք՝ այս բոլորին միասին: Այդ ժամանակում տաճիկ կառավարութիւնն ինչ միջոցների չդիմեց նրան ձեռքաւորելու կամ մի այլ կերպով նրանից ազատելու համար: Հիւպատոսների միջամտութիւն, անձնական ապահովութեան խոստումներ՝ նրան զինաթափ անելու, զօրքերի և ոստիկանների հետամտութիւններ, խուզարկութիւններ, — բոլորը բոլորը անօգուտ, ապարդիւն ջանքեր մնացին: Բոլոր առաջարկութիւններին նրա պատասխանը միշտ յանդուգն, համարձակ, յեղափոխականին վայել վեհութեամբ վճռական մերժումը եղաւ:

Այդ բոլոր փորձերի անյաջողութիւնից կատաղած և տաճիկ կառավարութիւնը, ըստ իր սովորութեան, վերջիվերջոյ խաղաղ ազգաբնակչութիւնը նորանոր զոհանքների ենթարկեց. նա գիտէր, որ Վազգէնի սիրտը իր հայրենակիցների տառապանքները տանել չի կարող: Վազգէնն այս դեպքումն էլ իրեն հաւատարիմ մնաց և անարգ կառավարութեան դէմ ճակատ առ ճակատ կռիւ դուրս եկաւ. անհաւասար, յուսահատ կռիւ էր այդ: Շատախի առիւծ խմբապետ Միքոյի և վանեցի Արշակի հետ կռուութեամբ հերոսական կռիւց յետոյ՝ նա ընկաւ վերջապէս իր արժանաւոր ընկերների հետ:

Ընկաւ... ընդամենը 25 տարեկան հասակում... բայց ո՞վ կարող է ասել, թէ նա կարճ ապրեց:

Կենքեր կան, որոնց մի ժամը մի տարի արժի.

* * *

ՄԻԲԱՅԷԼ Լ.ՁԻԶ-ՄԷԼԻՔԵԱՆ — ՄԻԲՈ

Ժողովրդի մարդ էր Միքոն, կնոջ երեխաների տէր. իր արդար վաստակով ապրող հիւսն էր նա: 91 թւականին, 35 տարեկան, նա ձգեց բոլորը և հայդուկային

գտած բանտարկեալի մը վրայ: Ընկերոջ աղաղակները լսելով բոլոր հայ բանտարկեալները դուրս կը թափին և փառաւոր ծեծ մը քաշելով քիւրդերուն՝ կը քշեն կը տանին իրենց խուցերը: 5-6 քիւրդի գլուխ կոտորած էին արդէն, երբ զինուորներու խումբ մը բանտը պաշարելով՝ քաղաքապետին առաջնորդութեամբ, հրացանները կուռններուն վրայ ուղղելով՝ կռիւը դարձեցնել կը հրամայէ: Լսող չկար. քաղաքապետը կը հրամայէ հրացաններն արձակել, բայց բարեբախտաբար հազարապետը ներկայ չըլլալուն, քաղաքապետին հրամանը չի կատարւի: Վերջինս դուռները բանալ տալով համարձակ ներս կը մտնէ, կռիւն պատճառն իմանալու: Կռիւն ինքնին դադրած էր արդէն, որովհետեւ հայերը յաղթած էին, և բան մը որ ամէնէն ուշագրաւն էր, ան է որ այդ կռիւն մէջ դերսի մըցի քիւրդերը հայերուն կողմը բռնած են միւս քիւրդերուն դէմ:

Կռիւը կը պատահի գիշեր ատեն յունւար 6/1-ին: Քիւրդերը հայերէն թուով մէկուկէս անգամ աւելի էին:

Կառավարութիւնը անպատիժ թողուց այդ խռնակութեան պատճառ եղող քիւրդերը, բայց շղթայել տաւ 3 հայ բանտարկեալներ, անոր համար որ քաղաքապետին ներս մտած միջոցին՝ հայերուն կողմէն քիւրդերուն վրայ նետած քար մը պատահմամբ քիչ էր մնացեր ոստիկանի մը գլուխը ջախջախէր:

ՆԱՄԱԿ Կ. ՊՕԼՍԵՆ

4/16 մարտ 99

Օրմանեանին «հաշտարար» քաղաքականութեան գեղեցիկ պտուղները քաղելու վրայ ենք ամէն օր: Պալատին հոգակած և պատրիարքին զմայլած «անդորրութեան» համն ու հոտը գաւառներէն հոս կ'անցնի կամաց-կամաց:

Հայերու դէմ խտրութիւնը վերջին ծայր հասած է հիմա. ամէն շաբթու հայեր կ'աքսորւին, բաւական է որ հայ մը չնչին պատճառով բանտ իյնայ, և քսորի հրամանը կը հասնի ետեւէն: Միայն ռամազան 15-ի առթիւ 20-էն աւելի հայեր աքսորւած են. բանտէն նոր արձակւած մը պատմեց: Թէև Համիդը ցամաքէն ջանցաւ Պօլիս Մարգարէին «խըրգան» համբուրել երթալու, բայց ռամազանի առաջին օրէն մինչև 15-ը երկու կամուրջներուն տակ ալ ոստիկաններ խուժ-խուժ կը հսկէին օրն իբրև: Խըրգայի-Շէրիֆի օրն ալ նաւակներու անցուդարձը բոլորովին արգիլեցաւ, ինչպէս մինչև իսկ կամուրջներու մօտ ձուկ բռնելը:

Չկարծւի թէ ռամազանի առթիւ էին բոլոր այդ խտրութիւնները, որոնք օր օրի կ'աւելնան, և որոնք այնքան ապուշ բաներ են, որ ծաղրելի պիտի ըլլային, եթէ ցաւալի չըլլային: Հայուն արգիլւած է ժամը 12-էն կտր նաւակ նստիլ, այնպէս որ եթէ գիւղաբնակ հայ մը վերջին շոգենաւը փախցնէ, ստիպւած է հիւրանոց երթալ կամ փողոցը մնալ: Հայուն արգիլւած է որ և է ընտանեկան տօնախմբութիւն կատարել կամ երեկոյթ սարքել:

Իրերու խոս ծանր կացութեան մէջ մեր պատրիարքարանը շատ մեծ գործի վրայ է... Վանի կրօնափոխութիւններէն քաջալերւած՝ Ազարեանի ապուշ սանե-

րէն մէկը անի գրքոյկ մը հրատարակած էր վերջերս հայերը պապականութեան հրաւիրող: Օրմանեանը, որ հոգով սրտով կը տենչար իր աստածաբանական հրամարկներով պապանձեցնել այդ եռանդուն մարդորսները, ոչ լրագրական յօդւածի մը արտօնութիւն կրցաւ ձեռք բերել, և ոչ ալ տետրակ մը հրատարակելու յաջողի: Կոնդակ մը ցրել տաւ վերջերս եկեղեցիները. անոր ալ իմաստը օրմանական է, խեղճ ու կրակ բան մը:

Պատրիարքարանին բոլոր առաջարկները մերժումի կը հանդիպին, և պատրիարքն ալ իր բարկութիւնը... Ժողովրդին վրայ կ'առնէ, կառավարութեան քով վարկը բարձր (») պահելու համար: Միացեալ Ընկերութիւնները իզուր կը խնդրեն Օրմանեանէն հանգանակութեան համար ժապաւինեալ տետրակ կամ թատրօնի ու նազահանդէսի արտօնութիւն. պատրիարքը կը մերժէ ու կը մերժէ: Իր բարեկամները արդարացնել կը ճգնին զինքը, քաղաքագէտ անւանելով իր վարմունքը, իսկ ծածուկ տեղեր ալ կը փսփսան թէ «ճիշդ չի թէ ան, և թողնելու է որ գիտցածը ընէ. վերջը կը հասկնանք բարին»: Այդ պարունները բան մը միայն կը մոռնան, որ մեր թշնամին շատոնց է որ ալ ճիշդ չի թուի: Եւ մէկդի թողած՝ բացայայտ պատերազմ հրատարակած է մեզ դէմ, սուրը արդէն ելած է պատեանէն և իր գործը կը շարունակէ անդու... Պատրիարքը շատ, շատ խօսեցաւ՝ ճառ, քարոզ, ատենաբանութիւն, բայց օգուտը, ո՛ր է. ինչ եղաւ Սիսի կաթողիկոսական խնդիրը, որբերու համար համազգային հանգանակութեան առաջարկը, անմեղ բանտարկեալներու արձակումը, և այլն, և այլն:

Մտքերը սաստկապէս գրգռւած են պատրիարքին դէմ: Օրմանեանի դիրքը, որ արդէն խախուտ էր, կը մօտենայ տակաւ. իր փլուզումին...

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱԹՈՒՐԻԲ ՍԱՀՄԱՆԱԳԻԼԻԻՅ

3 փետրւար 99

Արդէն հաղորդել եմ ձեզ այն խտրութիւնների մասին, որոնք արտայայտեցին 9 զինակիրների բարբարոսական գլխատման գործում: Այժմ գրում եմ յաջորդող դէպքերի մասին, ինկատի ունենալով մինչ փետրւար եկած անցածը:

Դէպքի տպաւորութիւնը մեծ էր: Ճնշեց ոչ միայն Սալմաստի ամբողջ ժողովուրդը, այլև նոյնիսկ տեղական կառավարութիւնը, որ վախնում էր անդիական հիւպատոսի միջամտութեան հետեւանքներից: Սակայն անցան օրեր-շաբաթներ, ամէն ինչ վերջապէս հանդարտեց եւ ժողովուրդը դիմեց իր առօրեայ կեանքին: Մենք միայն, նա-հատակածներին ճանաչողները, նրանց ընկերները, հանգըստութիւն չունէինք: Ընկածների պատկերները դեռ կենդանի էին բոլորիս առաջ եւ սոսկալի վրէժ էին պահանջում, — վրէժ գոնէ այն դաւաճաններից, որոնք ամէնալիկ կերպով մորթել տւին՝ տուճ-տեղ, մահ ու վտանդ արհամարհած մեր ընկերներից ամբողջ ինը հողի... Մեր անելիքը որքան անխուսափելի, նոյնքան պատասխանատու էր: Այդ պատճառով տեղում ժողովւած տեղեկութիւնները ներկայացուցին Պարսկաստանի Կենտրոնական կոմիտէի հայեցողութեան: Ձեզ արդէն յայտնի է, որ, Կենտրոնական կոմիտէի վճռի համաձայն, մասնիչներից երկուսը Ստեփան եւ Խուս Առաքել՝ արդէն տէքօրի են ենթարկւած: Ստեփանը, իբր գիւղական յայտնի մատնիչ, յարաբերութիւն ունէր Սալմաստի կառավարիչ Հաջի խանի հետ եւ դէպքում մեծ դեր էր խաղացել Խուս Առաքելը մի

սարգսփելի փչացած արհեստավոր էր, որ դէպքի ժամանակ «խաղաղի» (ուղեցոյցի) դեր էր կատարել քիւրգ ձիաւորներին համար:

Մահաւան այս պատմիները կրկին ալեկոծեցին ամէն ինչ: Ժողովուրդը մի կողմից սկսեց վախենալ կառավարութեան խտտութիւնների նորոգելուց եւ միւս կողմից՝ ահաբեկիչների սրից, որ ահապէս անխնայ կտրտել էր դաւաճանների մարմինները: Տեղական կառավարութիւնը նոյնպէս սարսափահար եղաւ: Հաջի խանը մի տեղ նոյնիսկ ասել էր, «մի օր էլ ինձ այդպէս պիտի սպանեն», եւ միջնորդ էր գցել յեղափոխականների հետ հաշտելու համար: Հասկանալի է, որ այսպիսի հանգամանքներում ահաբեկիչներին գտնելու փորձ էլ չարեց: Իրա փոխարէն գիւղացիներից 250 թուաման առան եւ լռեցին: Թէ որքան մեծ վրեժներ կրեցին Մահլաթի գիւղացիք եւ առհասարակ Սալմաստը մեր բնակիչների սպանութիւնից — դրա մասին կարող են գաղափար տալ հետեւեալ փաստերը: Ամբողջ երեք տարի, մինչ զինակիրների նահատակելը, Սալմաստը երեք քիւրգի երես չէր տեսել: Նրանք սոսկում էին «Ֆէ-գալի» անունից: Բայց այդ դէպքից յետոյ քիւրգերը սիրտ առան եւ, «Ֆէգալիներին» չնշած համարելով Պարսկաստանում, սկսեցին զինակիրները աւազակութիւններ անել: Մահլաթ գիւղում մինչ այսօր 12-14 տուն են կողոպտել եւ 60-ի չափ ոչխար են փախցրել: Ցերեկայ երթեւեկով թիւններն էլ են յաճախեցել, եւ, ուղիղ, չեն նախապատրաստում արգելք դեռ նորանոր զօրակառութիւններ Սալմաստի համար: . . .

Կառավարութեան ներկայացուցիչներից, որոնք այնքան անխիղճ դեր կատարեցին 9 զինակիրների վերաբերմամբ, Հաջի խանը, որ սկզբում հեռացրել էր պաշտօնից, կրկին ծառայութեան է կանչւել: Իսկ Զարգաթը (Սալմաստի եւ Խոյի ընդհանուր կառավարիչը) միայն վերջերս պաշտօնանկ եղաւ եւ այժմ Թաւրիզ է կանչւած բացասարութիւնների համար:

Սահմանակից պարսկահայատակ քիւրգերի մէջ վերջին երեք ամիսները տեղի ունեցան մի շարք հետաքրքիր իրաւունքներ, որոնցից յիշատակենք յայտնի ցեղապետ Զաֆար աղայի արիւնաձեղ ընդհարումները Մահլաթ աղա ցեղապետի հետ եւ Դերիկի մօտերքում քնակող Ամիր-Զամին ցեղապետի սպանութիւնը մի ուրիշ քիւրգի ձեռքով: Այս ցեղապետներից առաջինը՝ Զաֆար աղան՝ 97 թիւն Խանասորի արշաւանքի ժամանակ օգնութեան էր փնայել Շարաֆին եւ մի վերջ էր ստացել ճակատին, սակայն այժմ ուրիշ քիւրգ ցեղապետների հետ զօգոնութիւններ ունենալու պատճառով հայերի հետ աւելի հաշտ է, քան եղել է երբեք: Սպանւած Ամիր-Զամինը այն ցեղապետն էր, որ 96 թիւն Դերիկում կռիւ էր բռնել մեր խմբապետ Իսմանի մարդկանց հետ: Այդ կռուումն էր, որ, ինչպէս յայտնի է, զոհեց ժողովրդական հերոս Շերոն:

ՀԱՅԱՍՏԱՆԵՆ ԵՎ ԱՅՆԱՍՏԱՆԵՐ

(Journal de Genève, 4 ապրիլ 99)

Վան, 6^{րդ} փետրւար 99

Գիւղերը բնակողներուն վիճակը իրապէս զարհուրելի կը դառնայ: Հայոց յանձնաժողովը, որ իր տրամադրութեան տակ՝ ունի որոշ գումար մը, խնդրեց մեզմէ շարունակել գործել իրենց հետ: Ընդունեցինք այդ առաջարկը, թէեւ ատով զգալապէս կ'աւելնան մեր ծախքերը, որոնք արդէն բաւական ծանր էին: Երջանիկ էինք տեսնելով անոնց մեզ նկատմամբ տածած վստահութիւնը: Յորդորեցինք որ իրենք յատկապէս աւելի զբաղին գիւղերով: միջոցաւ մենք կարելին պիտի ընենք որպէս զի քաղաքին մէջ անօթութեան մեռնող չըլլայ:

Օրապահակ կը բաշխենք անօթութեան տառապող բոլոր մանուկներուն — որք չըլլան թէ ոչ — մօտ

հաշար հագի քաղաքին մէջ, եւ առողջ անձերուն ալ հիւսելու գործ կուտանք: Ասոնցմէ զատ, մենք հալկադրած ենք օգնելու հիւանդներուն եւ ամէն անոնց որոնք ապրուստի ոչ մէկ աղբիւր ունին: Թշառութիւնը ահաբեկ պիտի ըլլայ մարտ եւ ապրիլ ամիսներու մէջ: Բոլոր պաշարները պիտի սպառին եւ կարելի չպիտի ըլլայ տակաւին դաշտերուն մէջ հաւաքել ոչ արմատ եւ ոչ ալ խոտ:

Վան, 19 փետրւար

Լուրջ քննութիւն մը հաստատեց գիւղերուն մէջ ահաբեկ թշառութեան մը գոյութիւնը: 12,000 հոգի սնունդէ զուրկ են, եւ ասոնց թիւը պիտի աւելնայ դեռ երեք ամսան մէջ: Մարդ-գլուխ օրը մէկ սու պէտք է գարի գնելու համար:

Վան, 20 փետրւար

Մեր քննիչները վերադարձան Թեմարէն եւ կը հաղորդեն թէ բազմաթիւ տուններու մէջ կտոր մը պաշար չէ մնացեր: մարդիկ կը կերակուին թեփով, կտաւատով, շատերը մեռած են սովէն եւ ծիրուկէն: Հայոց յանձնաժողովը հեռագրեց պատրիարքին, անգլիական հիւպատոսը դեսպանատան եւ եւ ալ Պօլսի յանձնաժողովին դրամ ստանալու համար: Կարգադրութիւններ ըրի սերմնացու եւ տաւար հայթայթելու համար քանի մը գիւղացոց: Իրենց հունձքին կէսը մեզ պիտի տան ասոնք, որով օժանդակութիւն մը պիտի ըլլայ մեր որբանոցներուն: Մեր վիճակը սոսկալի է:

Մարաշ, 14 փետրւար

Զէյթունի փողոցները լցած են սոված մարդերով: որոնք շրջակայ գիւղերէն կուգան, եւ թշառութիւնը նկարած է իրենց դէմքերուն վրայ: 2ափազանցութիւն չէ եթէ ըսենք որ 1,000 հոգի Զէյթունի մէջ 42,500 ալ մերձակայ գիւղերը իսպառ զուրկ են սնունդէ: Մէկ ամսէն անոնց թիւը պիտի կրկնապատկի, եւ երկու ամսէն աւելի գէշ պիտի ըլլայ: Ատկէ զատ, այս մարդիկ գործ չունին, կ'ուզէինք զբաղում տալ խնոց:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱՅՈՒԹԻՒՆԸ ԿՐԷՏԻ ՄԷՋ

Որքան ջուտ դէպի քայքայումը կը դիմէր կղզին բոնակաւ՝ ուժիւնները ներքեւ, այնքան աւելի արագ կը վերածնի իր աւերակներէն այսօր, երբ երկրին վարչութեան գուխը կը զբոսնին իբր Եօրկիոսի խոջհրդականներ Պրէտիի այն գաւառները, որոնք դեռ տարի մը առաջ «խառնակիչներ» կը նկատուէին Կանէան ուժակոծող մետութիւններուն կողմէն:

Բայց ո՞վ ըսաւ թէ դիւանագէտները չեն ամէնէն արտառող կերպով հակամտոյներ... Անցնի՛ր:

«Սահման ընտրող» ո՞վ հալոց է Գրէտիին՝ կարգուկանոնի աւրագ հաստատումն է՝ եւ այդ նպատակով է որ փութով առաջ կը մղեմ նախապատրաստական աշխատանքները: «Կըսէր Եօրկիոս հագի» երկու ամիս առաջ, եւ այսօր Կրէտէն ունի արդէն իր Սահմանադրութիւնը, որ Ազգային ժողովին մէջ յօշուած առ յօղւած քննուել Ետք, կըսապէ խնամազալ չորս քննութիւններուն վաւերացմանը:

Կրէտէի ծակաւորագիրը այսօր աւելի շահեկան կը դառնայ մեզ համար. եւ իրաւամբ, եթէ առաջ սրտայայտ մտաւանդութեամբ կը հետեւէինք այդ անսկիւն ժողովրդին իր ազատութեան համար գործ դրած անվատ ծիգերու դիւցազնագին, այսօր ան աւելի ուշադրութեամբ շահագրգռելու ենք իր նոր

կացութեամբը, որ իր նմանութեան բազմաթիւ կէտերով գործնական հետեւութիւններ կրնայ ունենալ նաեւ մեր դատին համար: Դժբախտաբար ձեռքի տակ չունինք այդ Սահմանադրութեան քննադիրը, եւ ստիպւած ենք շատանալ եւրոպական լրագրութեան մէջ հրատարակւած ամփոփումովը: Մենք առաջ կը բերենք հոս աչքի զարնող մասերը միայն:

Սահմանադրութիւնը խմբագրւած է, կ'ըսէի, չեւէնականին եւ Արեւելեան Ռումէլիոյ կազմական կանոնագրին համեմատ, քայց աւելի պահպանողական ոգով: Այդ քայցը կրնար մտաւորաբար անտեղի համարուիլ մը ունենալ, եթէ միայն կանխաւ յայտնի չըլլար որ այդ թուովը կազմողները օտարներ չեն, այլ Կրէտէի ամէնէն յարգելի եւ հմուտ մարդիկը — քրիստոնէայ թէ մահմէդական — եւ եթէ Կրէտէի մասին հշիւանին հետեւեալ դիտողութիւնը իրականութեան քիչ մը մօտիկ չըլլար. «Իմ կարծիքով երկրին ոգին պահպանողական է»: Կը հաւատան իսկ թէ Ազգային ժողովը շատ քիչ փոփոխութիւններ մտցուց այդ ծրագրին մէջ, եւ ինչ որ յայտնի է մեզ այդ փոփոխութիւններէն՝ պատիւ միայն կրնայ բերել իրեն: Ծրագիրը իշխանին իրաւունք կուտար՝ ժողովուրդին կողմէն ընտրուած պատգամաւորներէն զատ, իր ընտրութեամբ 10 հոգի եւս մտցնել Ազգային ժողովին մէջ: Այդ «սահմանադրութեան» ծրագրի դէրը կոչւած էին կատարելու ծրագրին հեղինակներու կարծիքովը: Ազգային ժողովը մոտիկ ընել չուզեց բոլոր առարկութիւնները եւ իր բոլոր վստահութիւնը յայտնելով հանդերձ իշխանին, չնշել տուաւ այդ յօդւածը:

Սահմանադրութեան ծրագրին հեղինակները եւ Ազգային ժողովը կարելին ըրած են արդար գոնեւելու համար իրենց արինականը մահմէդականներու նկատմամբ եւ ջանադիր միանգամայն անոնց դիւրագգայութիւններուն չուշելու:

Գործադիր իշխանութիւնը պիտի վարէ իշխանը իր կողմէն ընտրուած հինգ պատասխանատու նախարարներու կամ, ինչպէս Սահմանադրութիւնը կ'անանէ, «խորհրդականներու» միջոցով: Այդ խորհրդականներէն մէկը մահմէդական պիտի ըլլայ անպատճառ: Համեմատութիւնը ճշդիւ պահպանուած է ուրեմն, մահմէդականները կողմին քնակչութեան մէկ հինգերորդը կազմելուն:

Քայց ամէնէն աւելի քննող է այդ տեսակէտէն Սահմանադրութեան 11-րդ յօդւածը եւ այդ առթիւ ժողովին մէջ ծագած վէճերը: Այդ յօդւածը կ'ըսէ իրականութեան վերաբերեալ հոշակէ, արգիւելով միայն մարդոտութիւնը (roschism): Քրիստոնէայ պատգամաւոր մը ամօթ («») համարելով ժողովին այդ աստիճան հաշտարար ոգին, առաջարկեց որ երկրին պաշտօնական կրօնը յունականը հռչակել: Բոլորն փծաքանութիւն մը փրթաւ: Մահմէդական պատգամաւորները քնակչութեամբ ընդդիմացան այդ փոխառաջարկին, եւ իրենց հետ նաեւ քաղմաթիւ քրիստոնէաներ: Երկար հակամարտէ ետք ժողովը 133 ժայտով 22-ի դէմ մերժեց այդ փոխառաջարկը:

Նոյն ոգով ներշնչւած երկրորդ նշանաւոր գիշում մը ըրաւ ժողովը քաղքէն եւ ընտրութեան առթիւ: Ծրագրին համեմատ իշխանը իրաւունք պիտի ունենար անանել եւ պաշտօնէ հանել ամէն կարգի պաշտօնատարներ, ասոնց մէջ նաեւ քաղքէն եւ ու միւլֆթիւնները: Մահմէդականները խնդրեցին փոխել այդ յօդւածը, քանի որ իրենց կրօնական կանոններու տրամադրութեան համաձայն՝ շէյխ-եւ-իսլամին կը պատկանի քաղքէնը եւ միւլֆթիւններու ընտրութիւնը: Ժողովը համակերպեցաւ եւ այս անգամ մահմէդական անդամներու պահանջին եւ որոշեց քաղքէն եւ ու միւլֆթիւնները նմանցնել Կրէտէի մետրապօլիտին եւ եպիսկոպոսներուն, որոնց ընտրութիւնը իշխանը պարզապէս վաւերացնել միայն կրնայ:

Մահմէդականներու կրօնական զգացմունքներուն նկատմամբ նոյն յարգանքն է որ թելդորած է Ազգային ժողովը շէքեի կրօնական տոնանքներուն նկատմամբ մահմէդականներու միջեւ ծագող դատերու այն մասը, որ կը վերաբերի կտակներու, ժառանգութեան, ամուսնութեան եւ այլն:

Ազգային ժողովին այդ հետեւական վարմունքը պերճախօս փաստ մըն է կրէտացոց քաղաքական հատկութեան եւ միայն նպաստել կրնայ խաղաղութեան վերականգնմանը իրենց քաղաքական փոթորակից կեանքին մէջ:

Պէտք է խոստովանիլ որ Եօրկիոս իշխանն ալ իր խոհմ ու շրջակայեաց ընկացեցով քիչ չուրաւորեց այդ հաշտարար ուղղութիւնը շնչոտելու: Եթէ մէկը կը կատարէ, ըսաւ, իր վարձմունքի կանօն ունենալով արդարութիւն ու հաւասարութիւնը ամէնուն համար, ոչ մէկ դժարութեան չի բաղնիք իր պարտականութիւնը կատարելու ատեն: Իր գործերը խօսքերուն չհակասեցին: Կ'ըսէ յիշել որ Եօրկիոս յատուկ պատգամաւորութիւն խրկեց մինչեւ անգամ Կանդիայի թիւրք հասարակութեան քով, համոզելու համար որ աներկաւոր վերադառնան իրենց թողած դիւղերը: Եւ չորսին գաղթելու մասին: Խոստա-

նալով դրամական նպաստներ իսկ հայթայթել քանդւած տուներու վերաշինութեան համար:

Եօրկիոսի խոհմութիւնը, Ազգային ժողովին անաշու դիրքը հաւանօրէն պիտի բաւէին շուտով անդորրութիւն բերելու այդ խոռով եւ քննոտ հոգիներու մէջ, եթէ միայն սուլթանին ուժ-ժիւղին հետ, սուլթանին խաւարին դաւերն ալ անհետացած ըլլային կողմէն: Անվիական թերթերը կը հաւաստեն թէ թիւրք կառավարութեան գաղտնի պատուիրակներ եկած են գրգռելու մահմէդականները, որ չհաշտին իրենց արդի կացութեան հետ: Եթէ այդ սաղքանքներուն լսէին մահմէդականները՝ Ազգային ժողովին ալ չպիտի մասնակցէին, քայց պէտք է ուրախանալ որ այդ անմտութիւնը չգործեցին: Մահմէդականները պիտի ըմբռնեն շուտով — եթէ միայն դեռ կուսած չեն — թէ ինչ է իրաւէս այդ պատուիրակներուն հետապնդած նպատակը: Գաղթե՛լ տաւ քայց դեռ ամիսներ առաջ էր որ չնօրօս, իզմիր, Սալոնիկ եւ Թիւրքիոյ այլ կողմերը գաղթած իրենց եղբայրները Եօրկիոսին կը դիմէին յայտնելով թէ կը հաւատան իր տւած հաւաստիքներուն եւ թէ աներկայ պիտի վերադառնան իրենց թողած տուն-տեղը, խաղաղութիւնը եւ կարգը վերահաստատելուն պէս: Այդ մարդիկը շատ շուտ չափեր էին այն անդունդը, որ կը քայքէր իրենց յարատեւել նկրտած ուժիւնը եւ Կրէտէի նորահաստատ վարչութեան միջեւ: Ամիս մըն ալ չանցած իրենց անօթի եղբայրները իզմիրի, Սալոնիկայի եւ Կարաքոնարի մէջ աւազակութեան դիմելու կը հարկադրէին, ապրուստի միջոց մը գտնելու համար... Քաջալերիչ չեն այս իրողութիւնները... Եթէ գաղթելու անմտութիւն է, ամէնէն մեծ տխմարութիւնը պիտի ըլլար գործիք դառնալով սուլթանին խաղաղականքներուն՝ կատարած իրողութեան դէմ կուրս, փոխանակ իրենց հայրենիքին քարոզութեամբ աշխատելու:

Պէտք է յուսաւ սակայն որ սառն դատողութիւնը եւ իրենց շահերուն ճշմարիտ գիտակցութիւնը, որ քիչ անգամ պակասած է գիւղացի տարրին, շուտով պիտի կարենան խորտակել ու փշրել սուլթանին բոլոր նենգութիւնները, եւ Կրէտէի մահմէդականները պիտի կարենան ազատութեան քարիքները վայելել, իրենց քրիստոնէայ հայրենակիցներուն ազատութիւնն ալ յարգել ստովելով:

Կրէտէի նորոգ վարչութեան այս փորձը անհունապէս կարեւոր եւ շահեկան է մեզ հայերու համար: Եւրօպական քննարկի տակ, ընտրական սկզբունքի վրայ հիմնուած ազատական վարչութիւն մը, ուր փոքրամասնութեան շահերը նոյնքան պաշտպանին, որքան նաեւ մեծամասնութեանը — իրականացնելու ձեռնարկն է վարչական այդ սխտէ մը կը մօտենայ դաշնակցական հիմքու վրայ դրած այն ծրագրին, որ մենք սկզբէն իվեր միակ գործնական միջոցը ցոյց տուած ենք Փոքր Ասիոյ մէջ մեր եւ մեր դրացի ցեղերու շահերն ապահովելու կարող:

Զաւիազանց նշանակիչ է այն պարագան որ Եւրօպան, թէեւ քիչ մը ուշ, քայց եւ այնպէս իրողութիւններու անողոր տրամաբանութենէ մը մղւած, այդ միակ գործնական ուղին ընտրեց Արեւելեան խնդրին հանգոյցներէն մէկը լուծելու համար: Առաջին քայլն էր դժուարը:

ՄԱԿԵՂՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ՄԱԿԵՂՈՆԱԿԱՆ ԳԵՐԱԳՈՅՆ ԿՕՄԻՏԷՆ

ՎԵՐՋԻՆ ԾԱՅՏԱՐԱՐԱԳԻՐԸ

Մալեղօնական Գերագոյն Կօմիտէն Կրէտէի ազաւ տումը առիթ բռնելով յայտարարագիր մը ուղղած է վերջերս մեծ պետութիւններուն: Շեշտելով Կրէտէի խնդրին կարգաւորման մէջ ինկատ առնուած երեք սկզբունքները՝ եւրօպական միջամտութիւն, քաղաքական ինքնավարութիւն եւ կեդրօնական իշխանութեան յանձնելը ազգաբնակչութեան մեծագոյն մասին վստահութիւնը վայելող անձերու, այդ նոյն երեք սկզբունքներու կիրառութիւնը անհրաժեշտ կը նկատէ Մ. Գ. Կօմիտէն, Թիւրքիոյ մէջ կատարուելիք ամէն իրական բարենորոգումներու համար:

Քաղաքակիրթ քշխարհին մարդկայնական զգացումներուն կօչ մը ընելէն ետք՝ որ մալեղօնական խնդրին շուտափոյթ լուծում մը տրւի, առանց տառապող ժո-

ղովորդին արիւնը թափել տալու իզուր, Մ. Գ. Կոմիտէն առաջ կը բերէ բարենորոգումներու իր նախագիծը, որ վաւերացած է Մակեդոնական Համաժողովին կողմէն 1896 նոյեմբերին:

Ահա՛ այդ նախագիծը.

1. Սալոնիկի, Մանասարրի եւ Իսկիւրի արդի վիլայէթներէն կազմել Նահանգ մը, Սալոնիկն ունենալով վարչանիստ (Բնագիրը առաջ կը բերէ հոս աշխարհագրական սահմանները):

2. Նահանգին տիրապետող ազգութիւնէն, 5 տարի ժամանակով նշանակել իրր Ընդհանուր Նահանգապետ շիտակ եւ թողատու ոգով անձ մը:

3. Ընդհանուր Նահանգապետը պիտի վարէ նահանգը ժողովրդի կողմին ուղղակի ընտրած ներկայացուցիչներու Ընդհանուր Ժողովի մը օգնութեամբ, փոքրամասնութեան իրաւունքներն ալ միանգամայն երաշխաւորելով: Այդ Ժողովը իր կարծիքը պիտի յայտնէ նահանգին ներքին վարչութեան վերաբերեալ բոլոր խնդիրներու մասին:

4. Երաշխաւորել ազգապէս եւ գոհացուցիչ կերպով Նահանգին անխտիր բոլոր բնակիչներուն բնակարանի անբնարարութիւնը եւ անձնական ազատութիւնը: Խափանել մամուլի գրաքննութիւնը:

5. Բոլոր պաշտօնատարները նշանակել իւրաքանչիւր տեղին մէջ տիրապետող ժողովրդին մէջէն: Բարձրագոյն պաշտօնակալները պիտի անւանւին սուլթանին կողմէն Ընդհանուր Նահանգապետին առաջարկին վրայ: Իսկ երկրորդականները վերջնա կողմէն ուղղակի:

6. Նահանգին ղեկավար լեզուները ընդունել թիւրքերէնին հաւասար նահանգին բոլոր հաստատութիւններուն մէջ, ազատ ընտրութիւն թողնելով վարչական միութիւններուն գործածել իրենց պաշտօնական յարաբերութիւններուն մէջ այդ լեզուներէն որն որ ուզենան:

7. Քրիստոնեայ այլեւայլ ազգութիւնները իրենք պիտի կազմակերպեն իրենց դպրոցները, առանց Նահանգին վարչութեան կամ ո՛ր եւ է մարմնի միջամտութեան:

8. Հանրային անդորրութիւնն ու կարգը պահպանելու համար կազմել միլիսական (milice) մարմին մը Նահանգին մէջէն զինուորագրած: Մարմինը ուղղակի պիտի գրէ Ընդհանուր Նահանգապետին հրամաններուն ներքեւ: Այդ միլիսին ամբողջը պիտի կազմէ այլեւայլ ազգութիւններու բնակիչներու թւին համեմատ, այդ մարդոց թւին առաւանձն հարիւրին մէկը: Աւագ սպաները պիտի անւանւին սուլթանին կողմէն Ընդհանուր Նահանգապետին առաջարկին վրայ, միւսները ուղղակի երկրորդին կողմէն:

9. Ընդհանուր Ժողովը պիտի որոշէ Նահանգին բիւջէն եւ հարկերը: Հաստիքներուն քառորդը պիտի յանձնէ Պետութեան ընդհանուր գանձին, կայսրութեան պէտքերուն համար՝ մնացորդը պիտի յատկացուի Նահանգին պէտքերուն:

10. Ընդհանուր Նահանգապետին հետ նոյն ատեն կարգել յատուկ յանձնաժողով մը, ուր բնիկ ժողովուրդները առատ կերպով ներկայացած ըլլան, Ընդհանուր Նահանգապետին նախադատութեան ներքեւ մշակելու համար մտցնելիք բարենորոգումներուն մանրամասները:

11. Ընդհանուր ներում քաղաքական բոլոր բանտարկեալներուն եւ բոլոր նոգեկներուն:

12. Նոյն բարենորոգումները մտցնել Ադրիանուպոլսի վիլայէթը:

Մակեդոնական այս ծրագիրը, որ մշակած է վաւերացած է 1896-ի նոյեմբերին, նմանութեան բազմաթիւ կէտեր ունի այն շրջաբերականին հետ, որը Դաշնակցութեան Կ. Պոլսի Վեդր. Կոմիտէն վեց մեծ պետութիւններու գերագահներուն ուղղեց 1896 օգոստոս 14/26-ին («Դրօշակ», 3 սեպտ. 1896, № 20):

Այս նմանութիւնները կ'ապացուցանեն պարզապէս թէ

որքան ընդհանուր են թիւրք բռնապետութեան տալի հեծող ժողովուրդներու ցաւերը, երբ այդքան համանման դարձաներ կ'առաջարկէին այդ ժողովուրդներու դատը պաշտպանող յեղափոխական այլեւայլ մարմիններու կողմէն:

ՖԻՆԱՆՏԻԱՆ ՍԳԻ ՄԷՋ

«Երբ մի ազնիւ մարդ մեռնում է, գրում էր վերջերս մի եւրոպական լրագիր, բարեկամները ողբում են նրա մահը, բայց երբ տեղի է ունենում մի ազգի վախճան, ամբողջ մարդկութիւնն է, որ պիտի ողբայ:»

Հարցը Ֆինլանդիայի մասին է, որի ինքնուրոյն քաղաքական գոյութիւնը ռուսաց կառավարութիւնը ոչնչացրեց գրչի մի շարժումով փետրւարի 3/15-ին:

1809 թւին, ռուս-շվեդական պատերազմից յետոյ, Ֆինլանդիան միացաւ Ռուսաստանի հետ՝ այն պայմանով, որ անձեռնմխելի մնան նրա դարաւոր արտօնութիւնները: Նոյն թւին Ալեքսանդր I ազգային ժողով կոչմանը Բորգօյում է, ինքն անձամբ գնալով ժողովի նիստին, ստորագրեց «Երաշխաւորութեան թուղթ»-ը՝ որի մէջ նա յայտնում է հետեւեալը.

«Մենք կամեցանք այս թղթով հաստատել եւ վաւերացնել այս երկրի կրօնը եւ հիմնական օրէնքները, ինչպէս եւ այն արտօնութիւնները եւ իրաւունքները, որ համաձայն սահմանադրութեան վայելում էր մինչեւ այժմ այս մեծ դքսութեան մէջ ամէն մի դասակարգ առանձին եւ ամբողջ ազգայնականութիւնը ընդհանրապէս: Մենք խոստատում ենք պահպանել բոլոր այս առանձնաշնորհումները եւ օրէնքները հաստատ եւ անխախտ իրենց ամբողջ գորութեան մէջ:»

Նոյնպիսի խոստումներ տւել են Ֆինլանդացիներին նրա բոլոր յաջորդները և ինքը՝ Նիկօլայ II, 1896-ի նոյեմբերի 6-ին, ստորագրել է նոյն խոստումը, որի պատճէնները ամէն մի ցարի ստորագրութիւնից յետոյ կ'պցնուում են Ֆինլանդիայի բոլոր եկեղեցիների պատերին:

Շնորհիւ այդ առանձնաշնորհումների՝ Ֆինլանդիան մի սահմանադրական օազիս էր ներկայացնում ռուսաց լայնատարած միապետութեան մէջ:

«Տւէք ինձ անապատ և տւէք ինձ ազատութիւն, և ես դրախտ կը դարձնեմ անապատը» — բացագանչում էր մի ժամանակ իտալացի մեծ հայրենասէր հայր Գալաացին: Եւ Ֆինլանդացիք գրեթէ դրախտ էին դարձրել իրենց անհիւրընկալ հայրենիքը, այդ «հաղար լճերի երկիրը», ուր ջրից ազատ տեղերը ինչէ լճիկ ժայռեր են միայն: Ազատ Ֆինլանդացու ազնիւ աշխատանքը ծածկել էր այդ ապառաժները ամէն ա ի ն տ ե ն ս ի վ մշակութեամբ և շրջապատել այդ լճերը ժողովրդական ուսումնարանների ահագին ցանցով: Եւ մինչ Ռուսաստանում փակում էին դպրոցները և բազմացնում գիւնտները, Ֆինլանդիան ոչնչացնում էր իր սահմանում հարբեցութեան վերջին հետքերը և իրագործում էր համազգային գրագիտութեան՝ բուն Ռուսաստանի համար դեռ երկար ժամանակ անմատչելի իդէալը:

Երևի հէնց դրանում էր Ֆինլանդացիների մեղքը, որովհետեւ Ֆինլանդացիք, սկսած իրենց միացման օրից, միշտ ցոյց են տւել իրենց՝ ամէնահաւատարիմ և օրիշնապահ հպատակներ ռուսաց ցարի:

Բայց վաղուց յայտնի է, որ գայլի ախորժակը բաց-

ւելիս՝ գառը միշտ մեղաւոր է դուրս գալիս: Եւ մի քանի տարի է արդէն, որ Ֆինլանդացի հայրենասէրները տխուր նախազգացութեամբ ականջ էին դնում Վատկովի և Պօթերօնօսցեվի սև դպրոցին պատկանող ռուս շօվինիստ ազգասէրների ատամների կրճատցին, թէև ոչ ոք չէր կարծում, թէ այդքան շուտով է գահավիժւելու թշուառ Ֆինլանդիայի գլխին մարդատեցութեան, եղբորութեան և բռնակալութեան թուխպերում պատրաստող ահագին շանթը:

Սև օր էր Ֆինլանդիայի համար փետրւարի 3/15-ը, երբ Նիկօլայ II ստորագրեց իր օրհասական ուկազը, որով վերացում է Ֆինլանդական Սահմանադրութիւնը:

Մինչև այժմ, այդ Սահմանադրութեան համաձայն, Ֆինլանդիայի Մեծ Դուքսը, այսինքն ռուսաց կայսրը, չէր կարող ոչ նոր օրէնք հրատարակել Ֆինլանդիայի համար, ոչ էլ վերացնել այնտեղի որ և է օրէնք՝ առանց Ֆինլանդական Ազգային Ժողովի (լանդտագ, սէյմ) գիտութեան և համաձայնութեան:

Այսուհետև, վերոյիշեալ հրովարտակի համաձայն, Ֆինլանդիայի համար օրէնսդրութեան վերաբերմամբ գործ է դրւելու նոյն կարգը, ինչ որ կայսրութեան միւս մասերի համար, այն տարբերութեամբ միայն, որ երբ օրէնքը հրատարակւի ամբողջ կայսրութեան համար, այն ժամանակ կը պահանջւի Ֆինլանդական սէնատի կարծիքը, իսկ եթէ օրէնքը հրատարակւելու լինի միայն Ֆինլանդիայի համար, բայց վերաբերի համապետական շահերին կամ կապ ունենայ ամբողջ կայսրութեան օրէնսդրութեան հետ, կը պահանջւի և Ֆինլանդական Ազգային Ժողովի կարծիքը: Երկու դէպքումն էլ այդ կարծիքն երբ, որոնք ոչ ոքի համար պարտադիր չեն, կը հաղորդւեն ռուսաց Պետական Խորհրդարանին, ուր օրինագիծը քննելուց և քէտրկւելուց յետոյ կը հաղորդւի իհայեցողութիւն կայսեր, որ ազատ է հաստատել կամ չհաստատել օրինագիծը:

Այդպիսով Ֆինլանդիայի Ազգային Ժողովը, որ մինչև այժմ օրէնսդրական մարմին էր, ինչպէս եւրօպական սահմանադրական տէրութիւնների պարլամենտները, այսուհետև դառնալու է մի սոսկ խորհրդակցական մարմին Պետական Խորհրդարանի վերաբերմամբ, որ ինքը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի խորհրդակցական հաստատութիւն միահեծան միապետի տրամադրութեան տակ: Ուրիշ խօսքով՝ Ֆինլանդական սահմանադրութիւնից այսուհետև մնալու է միայն մի սուեր, նոյնպիսի ողորմելի մի բան, ինչպէս Թիւրքահայերի Ազգային Սահմանադրութիւնը:

Ֆինլանդացի ժողովուրդը չէր կարող չզգալ այդ, և փետրւարի 6/18-ին, երբ կայսերական գուժաբեր հրովարտակը հրատարակեց Հէլսինգֆօրսում, ամբողջ Ֆին ազգը ցնցւեց մի մարդու պէս:

Ազգային ժողովը և սէնատը շտապեցին պատգամաւորներ ուղարկել կայսեր մօտ խնդրելու, որ նա փոխի իր վճիռը, բայց կայսրին չըջապատող մարդիկ թոյլ չտւին, որ պատգամաւորները ներկայանան նրան:

Մի երկրորդ, աւելի հանդիսաւոր պատգամաւորութիւն ևս ուղարկւեց՝ բաղկացած աւելի քան 150 ինտելիգէնտ անձերից և 400 գիւղացիներից, որոնք ընտրւած էին ամէն մի դասակարգից և իւրաքանչիւր համայնքից: Բայց այդ պատգամաւորութիւնն էլ, որ ներկայացնում էր մօտ 2,500,000 հաւատարիմ և օրինա-

սէր հպատակներ, նոյնպէս չկարողացաւ մատուցանել կայսեր ժողովուրդի խնդրքը և արտաքսւեց մայրաքաղաքից ոստիկանական միջոցներով:

Այդ պատգամաւորութիւնը տանում էր կայսեր ներկայացնելու 523,000 ստորագրութեամբ մի խնդրագիր, որ տպւած է եւրօպական լրագիրներում:

Ինքը ճշմարտութիւնն է, որ խօսում է այդտեղ Ֆին ժողովուրդի բերանով, բայց պէտք է կարծել, որ ճշմարտութեան այդ աղաղակն էլ կը մնայ «ձայն բարբառոյ» ռուսաց բարձր բիւրօկրատիայի բարոյական անապատում, որի խորշակը չորացնում է ազատ մտքի և ազնիւ զգացմունքի ամենաչնչին ծիւրը ամէն տեղ, ուր նա կարողանում է հասնել:

Այդ՝ Պօթերօնօսցեվի գաղափարներով սնւած՝ բիւրօկրատիայի գործն է անշուշտ Ֆինլանդիան քաղաքականապէս մեռցնող հրովարտակը, և նա անկասկած ամէն ջանք գործ կը դնի, որ երիտասարդ կայսրը չկարողանա զգալ թէ ինչ գահճի և այն՝ երդմնազանց, ուխտադրուժ դահճի դեր են կատարել տալիս իրեն իր անարժան խորհրդակցները:

Ֆինլանդացիք լաւ գգում են այդ: Ամբողջ Ֆինլանդիան սգի մէջ է: Temps-ի թղթակիցը այսպէս է նկարագրում իր բարեկամ ճանապարհորդի տպաւորութիւնները:

«Ոն գտայ ամբողջ գիւղը խորին սգի մէջ, լուռ՝ ինչպէս մի գերեզմանատուն. եկեղեցին սեւով էր պատած: Նոյնիսկ մի քանի տների պատուհաններում երեւում էին սև դրօշակներ: Երեխաները աղմուկ չէին հանում, չէին խաղում...»

Նոյնն է կատարւում Revue de Paris-ի ասելով երկրի բոլոր կողմերում:

«Կայսերական հրովարտակի հրատարակման հետեւեալ կիրակին, գրում է այդ հանդէսի աշխատակիցը, Ֆինլանդիայի բոլոր եկեղեցիները մի լուսնային համաձայնութեամբ հոկում կատարեցին ինչան ազգային սգի: Այդ օրից յետոյ կանայք Հէլսինգֆօրսի փողոցներում պտտում են սևեր հագած՝ իրենց օրերի եւ արիւնների, եւ բոլոր տօնախմբութիւնները, բոլոր զւարճութիւնները դադարել են»:

Բայց դարերով ազատ ապրած ազգին վայել չէ միայն լալ երբ բռնակալութիւնը դնում է իր լուծը նրա վրին: Եւ Ֆինլանդիան ոչ միայն ողբում է, այլ և ցոյց է տալիս եռանդի ու քաղաքացիական քաջութեան ոգևորիչ օրինակներ և տրամադրութիւն՝ թանկ գնով ծախել իր ազատութիւնը:

Մենք յիշեցինք արդէն համազգային խնդրագրի մասին: Այդ խնդրագիրը կազմեց փետրւարի 8/21-ին Հէլսինգֆօրսում գումարւած ահագին միտինգում: Բայց դա պէտք է լինէր դիմում ոչ միայն Ֆինլանդիայի մայրաքաղաքի բնակիչների կողմից, այլ ամբողջ ժողովուրդի բերանից: Անհրաժեշտ էր ամբողջ ժողովուրդի համաձայնութիւնը, իսկ ժամանակը թանկ էր: Եւ ահա Ֆին ինտելիգենցիան ցոյց է տալիս հերոսական եռանդ: Բազմաթիւ տիկիներ արտագրում են խնդրագիրը հարիւրաւոր օրինակներով: Մօտ երկու հարիւր ուսուցիչներ, բժիշկներ և ուսանողներ փետրւարի 25-27-ին ճանապարհ են ընկնում Ֆինլանդիայի զանազան ծայրերը: Չնայելով ձիւնին, չնայելով 30⁰ ցրտին, նրանք հասնում են խնդրագիրը Ֆինլանդիայի բոլոր համայնքները, նոյնիսկ բւեռային շրջանից դէպի հիւսիս, և

մարտի 5-ին խնդրագիրը ուղարկում է Կայսեր ծածկած 523,000 ստորագրութեամբ:

Թշառ երկրի բոլոր անկիւններում կատարեում են շարունակ բողոքի ցոյցեր:

Ոչ մի ֆինլանդացի տպարանատէր չհամաձայնեց տպել իրենց քաղաքական մահաւան դատաւճիւրը յայտնող ու կ ա զ ը: Ֆինլանդիայի պետական քարտուղարը և տեղական պաշտօնական թերթի խմբագիրը հրաժարական տւին իրենց պաշտօններին:

Ֆինլանդացի խմբագիրները, որոնց արգելած էր քննել իրենց թերթերում նոր ուկազը, յայտնեցին իրենց բողոքը հետեւեալ ձևով: Ահագին տառերով ներանք տպեցին Սահմանադրութեան այս երկու յօդւածները.

40. Ոչ մի օրէնք չի կարող հրատարակել, ոչ մի գորութիւն ունեցող օրէնք չի կարող վերացել տէրութեան պետի կողմից առանց Ազգային ժողովի համաձայնութեան:

71. Սահմանադրութիւնը չի կարող փոփոխութեան ենթարկել և ոչ ոչնչացել առանց պետական չորս դասակարգերի համաձայնութեան:

Եւրոպական լրագիրների ասելով՝ նոյն օրին տիրում է ամբողջ ֆինլանդացի ժողովրդի մէջ, որ վճռել է մինչև վերջին հնարաւորութիւն պաշտպանել իր ազատութիւնները, իր իրաւունքները, իր Սահմանադրութիւնը:

Դժգոհութիւնը տարածւում է և ֆինլանդիայից դուրս: Եւրոպական հասարակական կարծիքը վերաբերւում է ֆինլանդիային ամենաջերմ համակրութեամբ, որ առանձնապէս ուժգին կերպով արտայայտւում է Հվէգիայում և Նօրվէյիայում: Այդ երկիրների կառավարութիւնը, ինչպէս հաղորդում են լրագիրները, մտադիր է իրեն բողոք պատգամաւոր չուղարկել Նիկոլայ I-ի նախաձեռնութեամբ հրաւիրւած զինաթափութեան խորհրդաժողովին:

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

* *

„Standard“-ի Պօլսի թղթակիցը քննութեան առնելով հայ ժողովրդին ահռելի թշառութեան պատճառները գաւառներուն մէջ, մատնանիշ կ'ընէ հետեւեալ կէտերը: Նախ՝ ջ ա ռ գ ե ռ ը, որոնք զրկեցին ընտանիքները իրենց նեցուկներէն: Երկրորդ՝ ս ի ս տ է մ ա կ ա ն կ ո ղ ո պ տ ու մ ն ե ռ ը, որոնք կապտեցին ժողովուրդը իր ունեցածէն: Երրորդ՝ խ մ բ ո վ ի ն տ ա ռ ա գ ը ու մ ը, որ Պօլսէն գաւառները մղեց բոլոր այն աշխատող ձեռքերը, որոնք Պօլսի մէջ կամ անոր շրջակայքը զբաղւածներ ունենալով իրենց ընտանիքներուն ապրուստը կրնային հայթայթել: Այդ տարագրւած տարրը բեռ մը եղած է իր ընտանիքին, որովհետև երկրագործութեան անընդունակ է, իսկ ընել կրցած գործն ալ չկայ Փոքր-Ասիոյ մէջ: Եթէ ենթադրենք իսկ թէ գործի մը կարելի չլիայ ձեռնարկել, չորրորդ պայման մը՝ պ ա շ ա ռ մ ա ն դ ը ու թ իւ ն ը, որ իրապէս գոյութիւն ունի Փոքր-Ասիոյ մէջ, անհնար կը դարձնէ ո՞ր և է երթեկի:

Թղթակիցը ա ն կ ա յ ու չ և յ ա ռ ա գ ը ու կ ա ն

օ գ ն ու թ իւ ն մը միայն համարելով Եւրոպայէն եկած նպաստները, որոնց 80 ⁰/₀ քիւրդին գրպանը մտնելու սահմանւած է, կ'աւելցնէ.

„Իրապէս հարկաւոր եղածը հանրային ապահովութիւնն է, որպէս զի այդ դժբախտները կարենան իրենց սովորական գործերով զրադիլ, և գիւղէ գիւղ հաղորդակիցու ազատութիւնը: Ստար պետութեան մը հովանիէն դուրս տարակուսելի է այդպիսի արգիւնք մը ձեռք ձգել: Շատ հաւանական է որ ձեւական հովանաւորութիւնն ալ բաւէր, իսկ այդ ուղղութեամբ բան մը ընել պէտք է. եթէ կ'ուզի հայերը փրկել կատարեալ քնջումէ մը: Հոս փափաք եղած պարզ թելագրանքի մը նախկով՝ եւրոպական պետութիւն մը իր հովանաւորութեան տակ պիտի առնէ եղբւր նախընտրաբար երկրին ասիական նահանգներէն մէկը և ապրիլսով ուժասպառ հայ անկախութեան միջոց մը պիտի տայ խաղաղ և ապահով ապրելու: Այդպէս պաշտպանւած նահանգ մը վերջիվերջոյ ապաստան մը կը դառնար բոլանդակ հայ բնակչութեան, որ շատ շուտով կը վերականգնէր, եթէ միայն տուր իրեն այդ հաւանականութիւնը, որ ալժամ կը պակսի իրենս“

* *

Temps „Արեւելքի գործեր“ խորագրով իր 19 մարտ խմբագրականին մէջ հետեւեալ խորհրդածութիւնները կ'ընէ հայկական խնդրի մասին:

„Արեւելքի տղերքը, քանի մը շաբաթ իվեր, քունը կերպով մտազբառ կ'ընեն ամէն անոնք, որոնք ճշգրիտ գաղափար մը ունին այն անկայուն կացութեան մասին, որ ստեղծեցաւ եւրոպական համերգին անանկացած քաղաքականութիւնով:

Պիտի թւէր թէ Աթիւլ չամիլը սրտով պիտի քաղճար ուշ չհրաւիրել Անատոլիայի շարդերու զոհներէն կենդանի մնացածներուն վրայ: Եւրոպական ողորմասիրութիւնը զբաղւած էր դարձանել այն վէրքերը, որոնց առջին քաղաքականութիւնը չէր կրցած կամ ուզած առնել: Որքանոցներ հիւրընկալւած էին Հայաստանի որբերը: Դեռ նոր ամէնքն ալ զոցեցին սուլթանին հրամանով: Ճամբաները լեցած են մանուկներով, որոնք ոչ հաց ունին, ոչ տուն-տեղ, ոչ պաշտպան մը: Եւ այս այն պահուն երբ սովը կրպտորաստի պսակելու քիւրդերուն ըրածը և երբ Ռուսիան, անխորհրդ կերպով ետ թիւրքիս կըճամբէ հազարաւոր փախստականներ անողորմ ժաշման մը դատապարտւած:

Վէսթմինստըի դուքսը Եւրոպային կոչ կ'ընէ: Պէտք է յուսալ թէ ժողովուրդներու խիղճը պիտի արթնայ և թող չպիտի տայ կառավարութիւններուն որ մարդկայնութեան դէմ նոր ողորմութիւն մը կատարել թողուն, որ միանգամայն խենթութիւն մը պիտի ըլլար և անուղղելի սխալ մը քաղաքական տեսակէտով: Ժամը հասած է քաղաքականութեան գործը ծնող առնելու: Սպասելը քաջալերել ըսել է այն զարբելի խորհրդատուները, որոնք թիւրքիս կործանելով, հրդեհ մը կը բռնկեցնեն, որուն նետեւանքները ամբողջ Եւրոպան պիտի կրէ: Պէտք է ժամանակին միջամտել Հայաստան...:

Ե՞րբ պիտի հասկնան որ Արեւելքի մէջ պայթումի մը առջին առնելու միակ միջոցը աշխատելն է անդու և անդադրում՝ արդարութեան և առաջնիւնութեան յայտագրի մը, և կըքաւէ որ Եւրոպան հաստատ կերպով կամենայ և ուղղամտօրէն համաձայնութեան գայ յաղթահարելու համար Բ. Դուման, միւսիւման մոլեռանդութեան և սուլթանին մաքիաւէլութեան դիմադրանքները:

* *

Հայր Ֆէլիքս Հարմըթան իր „Nouvelles des Ecoles d'Orient“ երկամսեայ հանդէսին 219-րդ թիւին մէջ հրատարակած է ընդարձակ տեղեկագիր մը, որ իր ըսելով, Թիւրքիոյ ներքին գաւառներու քանի մը հայ եկեղեցականներ և երեւելիներ ուղղած են եղբւր վեր-

ջերս էջմիածնի կաթողիկոսին և Կովկասի հայերուն:

Այդ տեղեկագրին բովանդակութիւնը նորութիւն մը չէ մեր ընթերցողներուն համար, ուստի աւելորդ կը համարինք հոս զետեղել: Հ. Շարմըթեան այդ տեղեկագրին պատճենները խրկելով Բերլինի դաշնագիրը ստորագրող պետութիւններուն, սրտաճմիկ կոչ մը և առաջաբան մը կցած է անոնց, ուրկէ առաջ կը բերենք հետեւեալ տողերը, որոնք կ'ամփոփեն միանգամայն թէ տեղեկագրին տպաւորութիւնը և թէ Հ. Շարմըթեանին կոչը:

«Հիմա այլ եւս այն միահամուռ խողխողումները չեն, որոնք զործ կը դրւին դժբախտ հայերուն վրայ. 1896-96-ի այն անդ մարդագոհները չեն, որոնք քանի եւ մէկ օրուան մէջ քնաջինջ կ'ընէին, հրամանով եւ տրւած նշանի մը վրայ, քաղաքի մը կամ գիւղի մը քուրք քնակիչները, ողողելով անոնք հայերու արիւնով:

Թիւրքերը հասկցան որ Եւրոպայի վերջապէս յուզեցաւ այդ ջարդերէն, եւ որովհետեւ հիմա կը վախճան զինուած միջամտութիւնէ մը, փոխեցին իրենց զործելու եղանակը:

Մահմադ կրակի վրայ նահատակութիւնն է, թագուն ջընջումն է, հալածանքներու ամէնէն սոսկալին եւ ամէնէն անագորոյնը, որ կազմակերպած են անոնք տարի է մը ի վեր, մահաւանդ հեռաւոր նահանգներուն մէջ. հայ ցեղին դէմ, որը երդած են քնաջինջ ընել զանդադորէն բայց անվերջ, հարկաւոր միջոցները ծնող անելով Եւրոպայի շահագանցող չուզելու համար:

Հոգեվարք ժողովրդի մը այն յուսահատ կողմ կարդալէ ետք պիտի հասկնայ որ պէտք է քան մը ընել, որ ազգու որոշումներ պէտք է ծնող անել կարծ միջոցի մէջ, ազատելու համար զիրքը այն ահուկի կործանումէն որուն անդու կ'աշխատին իր հարստահաբիշները:

Կառավարական պետերու տեղ, եթէ անոնք անտարբեր մնան այս ժողովրդի ծակատագրին, որ իրենց աչքին առջեւ կը կտորեն, ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԺԻՔՆ Է՝ այն մեծ վնասակոր, աւելի զօր եւ աւելի վնասման յաճախ քան թագապետը, զուլանքը — որ պարտաւոր է իր ծնունդ անել հարստահարւած Հայաստանի դատը, կեղծքիչ թիւրքերու դէմ, հարկաւոր պետութիւնները զործելու, նոյն իսկ ուժով մարդկայնութեան եւ իրաւունքի համաձայն»:

«Ի ԽԱՅ ՀԱՆ ԶԴԱ», Գ. ԵԱՆ ԵՒ ԳԱԺԱՐՁԵԱՆ, 1899.

Գրքոյկը, ինչպէս մասամբ կարելի է գուշակել վերնագրից, ներառած է հայ փարիսեցիներին հայ յեղափոխական շարժման դէմ մղած արշաւանքին:

Այն ժամանակ, երբ դուք, ընթերցողներ, վաղուց սովոր էք մեր արտասահմանեան հրատարակութիւններում տնտեսել բազմաթիւ գրական փաշլեվաններ, որոնք միայն փոշի են բարձրացնում օգուտ, այն ժամանակ երբ դուք այդ ասպարէզում անընդհատ գործ էք ունեցել կեղծաւորների կամ ինքնամոլ յիմարների հետ, որոնք, եթէ ուժ ունենային, կարող էին բարոյապէս ձեզ ստորացնել միայն, — ներկայ փոքրիկ գրքոյկը թերթելով կարող էք փոքր ինչ հանգստանալ: Հեղինակների յեղափոխական արամադրութիւնը, նրանց անպայման յեղափոխական աշխարհայեացքը — ահա գրքոյկի արժանաւորութիւնը: Գուք կարդում էք գրքոյկը և գտնէ մի բոլոր սփոփում, որ անմիջապէս ձեզ հետ շփուող յեղափոխական շրջաններից դուրս ես կան հայ մարդիկ, որոնց մտքի ելէկները և սրտի զարկերը այնքան ծանօթ, այնքան մօտ, այնքան հասկանալի են ձեզ համար: Այդպիսի սրտեր, այդպիսի ձայներն են, որ, կենդանի պահելով յեղափոխական միջնորդորդ հասարակութեան մէջ, պիտի նպաստեն մեր դժուար գործի յաջող ընթացքին:

Գրքոյկի այս ընդհանուր տպաւորութիւնից դիմելով մանրամասնութիւններին, դժբախտաբար տեղ-տեղ մենք հանդիպում ենք մի շարք հակասութիւնների և չափազանցութիւնների, որոնցից յիշենք երկուսը:

Թւելով, օրինակ, հայ ժողովրդի կրած կորուստների պատասխանատուներին, պպ. հեղինակները տասը կէտերից եօթներորդում յիշում են նաև «հայ յեղափոխականներուն» իրենց դիւցազնական գործունէութեան մէջ պարզած անհամբերութեամբ և հուրքին սաստկութեամբ: Մենք պատրաստ ենք երկու ձեռքով ստորագրել յիշեալ տասը կէտերից իննին. պատրաստ ենք նաև աւելացնել այդ իննին թէկուզ նոյնչափ նոր կէտեր ևս, բայց յիշեալ եօթներորդի դէմ բողոքում ենք մեր բոլոր ուժով: Մենք հակառակ ենք այդ կէտին ոչ միայն նրա համար, որ մեր յեղափոխականների մէջ դժբախտաբար և հուրքին սաստկութեան տեղ ընդհանրապէս մենք նկատում ենք չափազանց համբերութիւն և հուրքի թուլութիւն, այլ և նրա համար, որ միանգամայն համաձայն ենք մի քանի երես առաջ նոյն գրքոյկում պպ. հեղինակների ստորագած այն խօսքերի հետ, թէ «պատմական օրէնքներու և հարկեցուցիչ պարագաներու առջև ոչ անհատական կամքերը նշանակութիւն ունին և ոչ խոհեմութիւն կամ էջու համբերութիւն յանձնարարող քարոզիչներ»:

Չենք կարող համաձայնել նաև Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածի ու մասնաւորապէս ներսէս պատրիարքի մասին հեղինակների ունեցած կարծիքի հետ: Սկզբունքով իհարկէ մենք համակարծիք ենք պպ. հեղինակների հետ, թէ աւելի լաւ կը լինէր, եթէ ներսէս և իր ժամանակակիցները ուսումնասիրեցին պատերազմի միջոցին զբաղէին Թիւրքիայի ուրեք կէտում որոշ յեղափոխական ձեռնարկի պատրաստութեամբ: Այդ միանգամայն նպատակայարմար քայլ կը լինէր թէկուզ միայն այն տեսակետից, որ այդպիսով օր առաջ ոտ դրած կը լինէինք միակ ուղիղ ճանապարհի վրայ: Բայց բաւականին հիմք չունենալով համարձակօրէն պնդելու, թէ այդ հանգամանքներում անպատճառ հայերս աւելի քիչ զոհերով պիտի անցնէինք մեր ազատութեան ճանապարհը, մենք ոչ մի իրաւունք չունենք ներսէսի գործունէութիւնը և զրա հետեանք Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածը՝ համարել հետագայ աղէտների «հիմնաքար»: Անցնելով ձեւեր, կտրտել ու այսպէս կամ այնպէս դասաւորելը դժուար գործ է, բայց չպիտի մոռանալ, որ ներսէսը իր ժամանակի գործիչ էր և մենք անկարող ենք պահանջել, որ անպատճառ նա լինէր նաև այն ժամանակի համար կարեւոր «խենթ»... Հարցը նրանումը չէ նոյնիսկ, թէ համապատասխանում էր ներսէսի առաքելութիւնը դէպի Բերլին՝ Համդիի շահերին թէ ոչ — մեր կարծիքով չէր համապատասխանում, այլ նրանում, թէ ներսէսը իր գործունէութեամբ աւելացրեց արդեօք մի մեծ գործն ևս հայկական կեանքի առաջընթաց հոսանքում թէ ոչ: Իսկ այս տեսակետից խնդրը պարզելու համար մենք չունենք մեր ձեռքում ուրիշ չափի քան 1) ներսէսի համարեա յեղափոխական քայլը, երբ նա Ս. Ստէֆանո, ուսուցիչի բանակը՝ գնաց և այնտեղից 16-րդ յօդուածը բերեց, 2) 61-րդ յօդուածի նշանակութիւնը, որով հայկական հարցը առաջին անգամ դարձաւ միջազգային քաղաքական

Հարց, և 3) այն ընդհանուր անօրինակ կրթիչ ու ուսուցիչ ազդեցութիւնը, որ ունեցան 16 և 61-րդ յօդաւածները ժամանակակից ամբողջ հայութեան վրայ և դրանով մեծապէս նպաստեցին յեղափոխական հողի մշակմանը մեր մէջ: Եթէ կան դատապարտելիներ, այդ այն գործիչներն են, որոնք ոչ պատրիարք և ոչ էլ ներսէսներ լինելով հանդերձ 78 թւականից յետոյ էլ յամառ միակողմանութեամբ շարունակում էին, իսկ ոմանք մինչև այժմ էլ շարունակում են, մնալ բացառապէս 61-րդ յօդաւածի հողի վրայ:

Վերջացնում ենք սրանով մեր ասելիքը պպ. Գ. Բանի և Գալիաքճեանի գրքոյի մասին: Մի քանի ուրիշ անձը գումարներ և թերութիւններ ընթերցողը անշուշտ կը նկատի:

Մ Ա Հ Գ Ո Յ Ժ

Ե Ր Ի Ա Ն Դ Ա Զ Ա Ր Ե Ա Ն

Ներկայ տարւոյ փետրուարի 2-ին (յունուարի 21-ին) Թիֆլիզի քաղաքային հիւանդանոցում կարճատե հիւանդութիւնից յետոյ վախճանեց ուսուցիչ Երւանդ Ղազարեանը՝ դեռ երիտասարդ հասակում: Միջնակարգ ուսումնական արտելուց յետոյ նա ներկեց ուսուցչութեան՝ մերթ հայ դպրոցներում, մերթ մասնաւոր դասեր տալով: Իբր վերին աստիճանի մաքուր և անպայման գաղափարի մարդ՝ նա իր ամբողջ երիտասարդութիւնն անցկացրեց ժողովուրդին մօտիկ, ապրեց նրա շահերին ծառայելու միակ մարդով, աշխատեց ժամանակակից հրատապ հարցերի շրջանում:

Դեռ աշակերտ հասակից՝ նա երբեք չի հաշտուել որ և է կոմպրոմիսի հետ և այդ պատճառով՝ ուր և լինէր նա, մենք նրան միշտ տեսել ենք բողոքող, դիմադրող բանակի մէջ: Ղազարեանը իր 15 թէ 25 տարեկան հասակում բնաւորութեան նոյն գծերն ունէր — միշտ շիտակ, միշտ ուղղամիտ և ճշմարտասէր: Նա յամառ էր իր բնաւորութեան այդ համակրելի գծերում, և հէնց այդ յամառութիւնն էր, որ նրան այնքան անգամ թողնում էր անգործ, անպաշտօն, երբեմն առանց ընկերների, նոյնիսկ կատարեալ չքաւորութեան մէջ՝ բառիս բուն նշանակութեամբ...

Յեղափոխական շարժման մէջ կովկասում նրա մասնակցութիւնը նոյնպէս միշտ ջերմ է եղել:

Տարիների ընթացքում երբեք նա չի խնայել այդ շարժմանը տալու իր ուժերի և ժամանակի մեծ մասը, նաև իր վերջին կօպէկները, երբ նրա առաջ ներկայացել է այս կամ այն ընթացիկ կամ ընդհանուր պահանջ: Իբրև յեղափոխական՝ նա մի քանի անգամ բանտարկւել է...

Մեռաւ Ղազարեանը ընկերներից հեռու, օտարների խնամքի տակ, դժբախտ իր կեանքի վերջին րոպէներում նոյնպէս, ինչպէս դժբախտ էր իր ամբողջ կեանքում... Այո, մեռաւ, բայց թող ապրի մեր մէջ նրա բարոյական մաքուր պատկերը, նրա սէրը դէպի ժողովուրդը և դէպի գաղափարը:

Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ո Ի Թ Ի Ի Ն

ԽՍՐԱԳՐՈՒԹԻՒՆՆ ԿՈՄԻՏԵՆ

«Ըրմէնիա» 5 ֆրանք, — Կ. Օրէնովիցայէն՝ Թ. Մարտիրոսեան 5 ֆրանք, — Լէսկովիցայէն՝ Գ. Փրանկիւլեան 5 ֆրանք, — Լոնդօնէն՝ Հայաստանի մէկուկէս շիլլին, — Ուսանողէ մը 7 ֆրանք: ՎՐԻՊԱՅ — N° 2 (93)-ի մէջ Լօրէնսի 22 դօլարին սիւսլմաք աւելցած է 4 սէնթ:

ՏԱՊԱՐ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵՆ

Հոկտեմբեր ամսու համար՝ Գնդակ 40 դահեկան, Հրաշ (3 շաբթաւոր) 15, Նարեկացի (շաբթաւոր) 5: Նոյեմբեր ամսու համար՝ Նարեկացի 10 դահեկան, Հրաշ (երկու շաբթաւոր) 10, Լուս (երկու շաբթաւոր) 10, Նարեկացի (երկու շաբթաւոր) 15, Սուլիշ շրջ. (հոկտ.) 35, Զրվէժ շրջ. (հոկտ. նոյ.) 54, Գեղշուկ շրջ. (հոկտ. նոյ.) 20, Շփոթ շրջ. (հոկտ. նոյ.) 20, Ա. Զ. շրջ. 20, Ա. Բ. Թ. 5, Նարեկացի (շաբթաւոր) 10, Հրաշ (շաբթաւոր) 5:

Նարեկացի (երկու շաբթաւոր) 20 դահեկան, Հրաշ (երկու շաբթաւոր) 20, Սուլիշ շրջ. (նոյեմբերի ամսաւոր) 35, Հրաշ (շաբթաւոր) 10, Նարեկացի 10, Պերժ (յունիսէն դեկտեմբեր — 7 ամսաւոր) 70:

1899 յունուար ամսու համար — Կրակ 100 դահեկան, Հրաշ (երեք շաբթաւոր) 30, Նարեկացի (երեք շաբթաւոր) 30, Նարեկացի (երկու շաբթաւոր) 20: ՀԱՄԱԳՈՒՄԱՐ 619 դահեկան:

ՈՍԿԱՅԱՆԻ ԿՈՄԻՏԵՆ

Նարիմ 26 դահեկան, Ոսկի 6, 75, Անծեղ 5, 25, Արսլանեան խ. 10, 50: Գումար 48 դահեկան:

ՆԱԽԱՅԱՆԳՍՏԻ ԿՈՄԻՏԵՆ

Կարտ-նների խ. 1 ոտըլի 85 կօպէկ, 2 Նկարի վաճառումից 2, Դաւիթ Բէկ խումրից, Սպարապետի միջոցով — օր. Ս. Անիմանց տ. Ս. Արովանց, տ. 2. վարժուհի, Սեղանից, Բագրատ Բագրատունի, Անտօն Էֆ., Սարգսի ծանօթներ պ. Հաւատարիմ, Վանանդ, Թադէոս Հարեան մէկ-մէկ ոտըլի, օր. Ա. Ստեփանեանց, տ. Դ. Զարդարեանց, Նկարիչ, Սիմօն 50-ական կօպէկ: Գումար 14 ոտըլի 85 կօպէկ:

ԲԱԼԿԱՆԵԱՆ Կ. ԿՈՄԻՏԵՆ

ԳԾՏԱՓԻ ԿՈՄԻՏԵՆ — 1898-ի հաշիւն, անդամներու ամսաւոր-ծարձեր՝ 70 լիւ 45 սանթ., Գազիկ խ. 10, վ. Բ. 14, 1899-ի մէջ Գազիկ խ. 10, Եփրատի ափունք 5, Ովկիանոս խումը 10: Գումար 119 լիւ, 45 սանթիմ:

ՎԻՇԱՊԻ «ՄԱՏ» ԿՈՄԻՏԵՆ

Կ. Հրաքուխ 20 դահեկան, Անանուն 20, Սերոբի հաշիւն 40, Ատրճանակ 10, Արծիւ խ. 60, Կայծակ 20, Մսեհ 5:

ՊՐՕԿԻԴԵՆՍԻ ԿՈՄԻՏԵՆ

Իբրև զէնքի դրամ, 71 դօլար, հետեւեալ անձերէն՝ Գ. Յակ., Գ. Խան., Ե. Ման., Է. Փափ., Կ. Միւ., Ս. Տէր-Յար., Զ. Խալ. մէկմէկ, — Խոհարար Մկր., Ա. Զար., Գ. Սար., Ե. Սօպ., Կ. Եր. 2-ական, — Ա. Մալ., Ա. Սար., Ե. Զաք., 3-ական, — Ե. Մուշ., Կ. Տէր-Յակ., Կ. Ստեփ., Ն. Թադ., Գ. Մանու., Ա. Ասլ., Ա. Թաթ., Մ. Տէր-Ման., Լ. Սէմ. 5-ական: — Անդամաւորներ 1898 տարեշրջանին համար 45: Գումար 116 դօլար:

ԱՆԲՍԱՆԴՐԻՈՅ ԿՈՄԻՏԵՆ

1898 յունիսէն դեկտեմբեր. — Մեղու 210 դահեկան ողջ, Գօզման պէյ 210, Նգօ 175, Ե. Ազիզ 140, Պօլսեցի 140, Վիճակահանութենէ 135, Սրտոտի ծեղումը հանգանակւած 105, Մանր տօմսերէ 105, Միութիւնը փրկութիւն է 70, Տիկ. Մայր Հայաստան 70, Շուշանիկ 70, Էլէշիշեան 70, Սրտոտ 70, Յոյս 70, Յուլի 70, Շանթ խումը 57, Տիրտէոս 56, Դիպիթամաս 35, Համեստ 35, Կիւզէլ 35, Ե. Զաք. 32, Գ. Լուպանեան 20, Ս. Է. Գ. 10, Մըրջիւն 10, Մ. Վ. 5, Լեւոն 5, Եռուար ամսու գանձանակէն 29: Գումար 2,039 դահեկան ողջ:

Խմբագրութեան գլխիկ հետեւեալ հասցեով՝
Rédaction du Droschak, Genève (Suisse)

ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱՄ ՀԱՄԵՐԱՇԽ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ ՆՈՐ ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԵՏ

Միութեան բուն խնդրին դիմելուց առաջ՝ մենք հարկ ենք համարում մի ընդհանուր և համառօտ տեսութիւն անել մեր յեղափոխական կեանքի անցեալի մասին, դիւրութիւն տալու համար ընթերցողին աւելի լաւ ըմբռնելու Վերակազմեալ Հնչակեան կուսակցութեան դրութիւնը և մեր վերաբերումը միութեան կամ համերաշխ գործակցութեան խնդրին:

* * *

Դեռ 80-ական թւի սկզբներում թիւրքիացի հայը իր Յունստերով, Չաթո-Շէրօստերով, Ժիրայրներով, Արաբոստերով ակներև դարձրեց, որ գիտակցական և կազմակերպւած կուսի պատրաստութեան ժամանակը հասել է արդէն: Վեանքի անմիջական ծնունդ այդ հայդուկների գործերը, յեղափոխական առաքելների Օսմ. Հայաստան պտըտելը և մի քանի այլ պարագաներ այն աստիճան գրաւեցին հայ հասարակութեան ուշադրութիւնը հայկական խուլ շարժման վրայ, որ գրաւոր քարոզների մի քանի անջող փորձերից յետոյ վերջապէս հնարաւոր դարձաւ արտասահմանում «Արմէնիայի» կանոնաւոր հրատարակումը, որ սկիզբ դրեց մեր շարժման կազմակերպւած պրօպագանդայի շրջանին և, չնայած իր փոփոխամիտ ընթացքին, իր ժամանակին որոշ նշանակութիւն ունեցաւ: Ընթերցողներն անշուշտ յիշում են «Հայրենասիրաց Միութիւն» կոչւած կազմակերպութիւնը, նրա օթեակները: Ինչպէս անորոշ էր ինքը՝ «Արմէնիայի», նոյնպէս անորոշ էին և Հայրենասիրաց Միութեան ձգտումները: Բայց հակառակ «Արմէնիայի» վարանոտ քարոզներին՝ կեանքն այս անգամ ևս առաջ անցաւ: Խօսքին պիտի յաջորդէր գործը, և Գօլոշեանի ու Ագրիպպասեանի նահատակութիւնը նոր շրջան բաց արեց տարտամութեան մէջ գեգերող մեր երիտասարդութեան համար, սկսեց արիւն թափելու, արիւն ու վարձող ելու շրջանը: Մինչև այդ ժամանակ կեանքի մէջ պատրաստւած մտքեր կային, գիտէին, թէ ինչ պէտք էր անել գիտէին մինչև իսկ, թէ ինչպէս պէտք էր անել, բայց առաջին քայլն անողը չկար: Հարկաւոր էր օրինակ տալ: Գօլոշեանը և Ագրիպպասեանը բաց արին գիտակցաբար արիւն թափելու թափելու ճանապարհը և ցնցեցին ամբողջ հայ երիտասարդութիւնը: Սկսած էր ագիտացիայի շրջանը: Գօլոշեանի և Ագրիպպասեանի նահատակման հետեւեցին Վարինի յուզումները և Պօլսի 1890 թւականի նշանաւոր ցոյցը, որ կազմակերպւած էր եկեղեցիականների և տեղական Հայրենասիրաց Միութեան նախկին անդամների ձեռքով: Այդպիսով Հնչակեան կուսակցութիւնը, մտնելով ագիտացիայի շրջանի մէջ, իր կողմը գրաւեց թէ Հայրենասիրաց Միութեան և թէ ուրիշ խմբերի աւելի համարձակ, աւելի յեղափոխական մասը: Եւ Հնչակեան հետագայ գործունէութիւնը կրում էր մինչև վերջին ժամանակներս գլխաւորապէս ագիտացիական բնուրութիւն, որ չի պահանջում երկարատեւ աշխատանք, լայն կազմակերպութիւն, միջոցներ՝ զէնք ձեռք բերելու, զէնք մատակարարելու ժողովրդին, կուռղ ուժեր անմիջապէս պատրաստելու և: Բայց որ, օգտւելով

ժողովրդի մէջ արդէն այս կամ այն պատճառով ըստեղծւած յեղափոխական տրամադրութիւնից, հրապարակ է հանում այն՝ որոշ բողոքներ արտայայտելու, պահանջներ դնելու համար, մի խօսքով ցոյցեր է անում: Բայց ագիտացիան, որ գլխաւորապէս անհատական գործունէութիւն է, որ անհրաժեշտութիւն էր մեր յեղափոխական շարժման միայն մի որոշ, սկզբնական շրջանի համար, պէտք է լայնանար և լայնանալով փոխէր հետզհետէ իր բնաւորութիւնը, առաջ բերելով բուն կուսի, խմբական կուսի շրջանը, ուր մարդիկ դուրս են գալիս ոչ թէ իրենց, այլ թշնամու արիւնը թափելու մտադրութեամբ: Որպէս զի դարեւոր ստրկութեան մէջ ապրած ժողովուրդը դուրս գալ իր դրութիւնից և մի օր իբր իրական ուժ ներկայանալ իր թշնամու դիմաց, հարկաւոր է տալ նրան զէնք, որի շուրջը կը խմբեն ժողովրդի արդէն յեղափոխապէս պատրաստ անհատները: Այդ անհատները դարձեալ կը ունենան անընդհատ կռիւներով, իրենց հերոսական օրինակներով միայն կարող են աւելի և աւելի սուրաւորացնել կուռղների շարքերը, և այդ կուսի ճանապարհով միայն որ և է ժողովուրդը կարող է հասնել ընդհանուր ապստամբական դրութեան:

Հնչակեան կուսակցութիւնը չկարողացաւ ընթանալ կեանքի հետ, և զէնք ներս մտցնելու, մարտական կուռղ խմբեր կազմելու ու թշնամուն զգալի հարւածներ տալու համար պատրաստուելու գերն ընկաւ գլխաւորապէս Դաշնակցութեան վրայ:

Յոյց տալու համար, թէ մինչև որ աստիճան Հնչակեան կուսակցութիւնը անընդունակ գտնեց բաւականութիւն տալու հայ ժողովրդի յեղափոխական նոր պահանջներին, առաջ բերենք մի քանի օրինակներ:

Հնչակեան Մուրատը, երբ փոխեց իր գործունէութեան վայրը, երբ ձեռնարկեց Սասունի գործին, սկսեց Դաշնակցութեան հետ բանակցել և մի քանի անջող փորձերից յետոյ, ստիպւած եղաւ որոշ պայմաններ կապել սահմանագլխի մեր կոմիտէների հետ, որով և սկսեց նրանց մէջ համերաշխ գործակցութիւն: Պարզ է, որ Հնչակեան կուսակցութիւնը, մենակ, դեռ 1893 թւականին չէր կարողանում գոհացում տալ մի այնպիսի գործունէութեան պահանջներին, որպիսին էր Սասունինը: Պօլսի մէջ գործելիս, Մուրատները Դաշնակցութեան աջակցութեան կարիք չէին զգում:

Մուրատի ձեռքակալու մից յետոյ նրա ընկեր Դժոխքը, նոյնպէս հնչակեան, յոյսը կտրած բոլորովին Հնչակեան կուսակցութիւնից, սկսեց գործել Տարօնում բացառապէս դաշնակցական միջոցներով և դաշնակցական ընկերների հետ, կրելով սակայն միշտ իր վրայ «հնչակեան» անունը:

Հնչակեան կուսակցութիւնը, մենակ, իր սեփական ուժերով, զինւած խումբ երկիր մտցնելու առաջին փորձն արեց բաւական ուշ, 1895 թւականին միայն: Հնչակեան խումբը, — որքան յիշում ենք, 15-16 հոգուց բաղկացած, — ամբողջովին ձերբակալուեց Սալմաստից Վան տանող ճանապարհի վրայ: Յեղափոխական խմբի ձերբակալելը, այն էլ առանց կուսի, մի չեղած, արտակարգ երևոյթ էր Վասպուրականի յեղափոխական

կեանքի մէջ: Որքան մեզ յայտնի են ձերբակալման ման-
րամասնութիւնները, մենք ոչ մի տեղիք չունենք կասկա-
զի առնելու խմբի անդամների և նրա առաջնորդի ան-
հատական քաջութիւնը: Բայց ձերբակալման փաստը
ակներև պիտի դարձնէր, որ բացի այդ յատկութիւնից
անհրաժեշտ են և շատ ուրիշ պայմաններ, որոնցից զուրկ
է եղել փորձառութիւն չունեցած, այդ տեսակ ձեռ-
նարկների անհատական չնչնական կազմակերպութիւնը:

Աւելորդ համարելով թուել այստեղ մի առ մի այն
հնչական անհատ-գործիչներին, այն հնչական խմբ-
երը, որոնք թողնելով հնչական կուսակցութիւնը,
յարեւ են վերջնապէս Դաշնակցութեան — գլխաւորա-
պէս նոյն շարժառիթներից դուրս — չենք կարող
չսխալել այստեղ այնպիսի խոշոր փաստեր, ինչպէս Տրա-
պիզոնի, Երզնկայի, Գաղատիայի հնչական կազմակեր-
պութիւնների Դաշնակցութեան միանալը:

Եթէ այս փաստերին աւելացնենք և այն, որ յաճախ զա-
նազան հնչական անհատներ ու խմբեր զենք ստանալու
նպատակով այլևայլ դիմումներ են արել Դաշնակցական
մարմիններին, պարզ պէտք է լինի, թէ հնչական կազ-
մակերպութիւնը իր մէջ կրում էր մի պակաս, որ
ժամանակի ընթացքում աւելի և աւելի զգալի էր
դառնում:

Հնչական կուսակցութեան կողմից կոտորածների ժա-
մանակ ցոյց տաւ չնչին դիմադրութեան փաստը
ամենալաւ լուսաբանումը կարող է լինել մեր վերև ա-
սածներին: Ընդդիմադրութեան թուլութեան պատճառը
այն չէր միայն, որ կոտորածների շատ վայրերում չըն-
չական կազմակերպութիւնները գոյութիւն չունէին, —
ոչ, հնչականներ կային մի քանի տեղ, բայց այդ կու-
րպէին միայն յայտնի եղաւ, որ նրանք կամ զէնք
չունէին կուսակցութեան, ինչպէս օր. Կարինի հնչականները,
կամ զենք ունէին, բայց անվարժ էին կուսակցութեան, ինչ-
պէս Պոլսի 1895 թվականի ցուցարարները:

Այս տողերը կարգալիս՝ ընթերցողը անշուշտ յիշում
է Ջէյթունի ապստամբութիւնը, Ջէյթունի «հնչական
գնդերը, հնչական հրացանները, հնչական փամփուշտ-
ները»: Սակայն այս բոլորը նշանակութիւն կ'ունենար,
եթէ չլինէր հին Կեդրոնի անուրջների արդիւնք միայն:

Եւ որպէս զի մեր ասածները կասկածի չենթարկւին
այն ընթերցողների կողմից, որոնք լաւ չեն ծանօթ մեր
գործնական յեղափոխական կեանքին, նոյնպէս և նրանց
կողմից, որոնք տրամադիր կը լինեն մեկնաբանելու մեր
բացատրութիւնները «կուսակցական ոգով» կամ այլ
միտումներով, մենք առաջ կը բերենք փաստեր, այս
անգամ գուցէ հնչական պաշտօնական վկայաթղթերից
քաղած:

Հնչական հին Կեդրոնի դատապարտութեան վճա-
րում (9 սեպտեմբեր 1896) կարգում ենք հետևեալը:

«Նկատելով որ իրենց ձեռքը ունենալով բաւական քանա-
կութեամբ զէնք եւ ռազմամթերք, հակառակ իրենց խոստում-
ներուն՝ եւ էլ լուրջ ծեռնարկ չեն ցրած այդ զէնքերը երկ-
րին այս կամ այն Մասնաճիւղներուն հասցնելու, միջոցով թէ
Մասնաճիւղի, թէ Փոքր-Հայրի եւ թէ Կիլիկիոյ Մասնա-
ճիւղերը թախանձաբար զէնք ուզած են իրենցմէ, շատ ան-
գամ ներմուծելու միջոցներն իսկ ցուցնելով եւ մի քանի տե-
ղերէ դրամ ալ ուղարկելով:

Նկատելով որ Մասնաճիւղի շարժումներու ժամանակ ի եւ էլ դրա-
մական կամ ուրիշ կարգի օգնութիւն չեն դրկած՝ հակառակ
տեղին գործիչներուն պահանջներուն:

Նկատելով որ Մասնաճիւղի եւ ...-ի համար ...-էն դրկուած
երեք հարիւր յիսուն (350) ոսկին եւ ...-էն դրկուած երկու

հարիւր (200) ոսկին յատկացուած նպատակին չեն զործածած:
Նկատելով որ Մասնաճիւղի ապստամբութեան համար Ամերի-
կայի Մասնաճիւղներէն եկած գումարները եւ Մասնաճիւղի տառա-
պետներուն համար Լոնտոնի մասնաճիւղէն եկած հարիւր ութը
(108) ոսկին, ինչպէս նաեւ Ամերիկայի միւս Մասնաճիւղներէն
այս նպատակաւ եկած գումարները իրենց նպատակներուն չեն
զործածած:

Նկատելով որ ... զէնք դրկելու համար իրենց դրկուած
հարիւր վաթսուն (160) ոսկին չեն զործածած յատկացուած
նպատակին:

Նկատելով որ հակառակ իրենց զրաւոր խոստումներուն, զոր
ըրած են Կիլիկիոյ ընդհանուր ներկայացուցիչն, եւ բերանա-
ցի խոստումներուն, զոր ըրած են ա. Ապահիւն, չեն դրկած
իրենց տրամադրութեան տակ գտնուած զէնքը եւ ռազմա-
մթերքը, եւ նոյն իսկ այդ մասին ամենափոքրիկ ջանք մ'ան-
գամ չեն ցրած:

Նկատելով որ Կիլիկիոյ դրկելու համար ...-էն իրենց
հասած հազար հարիւր վաթսուն երեք (1163) ոսկին միայն
650 ոսկին դրկած են, այն ալ շատ ուշ եւ շատ ծախող
կերպով 1):

Նկատելով որ Ջէյթունի ապստամբութենէն առաջ, ապա-
ստամբութեան միջոցին եւ ապստամբութենէն վերջ իրենք ըս-
տացած են դրամական կարեւոր գումարներ զանազան կող-
մերէ. ինչպէս Պոլսի, Ամերիկայի եւ ուրիշ տեղերէ ուղ-
ղակի Ջէյթունցիներուն հասցնելու նպատակաւ, սակայն իրենք
այդ դրամներուն շատ աննշան մէկ մասը միայն դրկած են
Ջէյթուն...

Ներկայ դէպքում հետաքրքիրը այն չէ, թէ ով է
մեղաւոր, միայն հնչական հին Կեդրոնը, որ հոգ չի
տարել «իր տրամադրութեան տակ գտնուած» զէնքը
տեղ հասցնելու, ինչպէս պնդում են մասնաճիւղերը, թէ
իրենք մասնաճիւղերը, որոնք սպասել են, որ «ամենա-
կարող» Կեդրոնը ամէն բան ինքն անի. գուցէ մեղաւոր
են երկու կողմն էլ, գուցէ և Կեդրոնի «տրամադրու-
թեան տակ գտնուած զէնքերը» իսկապէս այնքան էլ
նրա «տրամադրութեան տակ» չեն եղել, ինչպէս վկայ-
ում է հին Կեդրոնի ամբաստանագրի մի այլ կէտը. գուցէ
այդ զէնքը՝ տեղափոխելու արժանի զէնք էլ չէր, եթէ միայն
դա այն զէնքի հոգակաւոր ամբարն է, որ մեզ ծանօթ
է և որ մի ժամանակ Դաշնակցութեան տրամադրու-
թեան տակ պիտի մտնէր...

Բայց ով որ էլ մեղաւոր լինի, մի փաստ ակներև է
դառնում — այդ այն է, որ վճռագրի տակ ստորագրած
բոլոր հնչական գործիչները վկայում են միաբերան,
թէ իրօք հնչական կուսակցութիւնը երկիր զէնք
մտցնելու հնարաւորութիւն չի ունեցել թէ և վեր-
ջին տարիներս միշտ դրա պահանջը զգացել է:

Տեղը չէ այստեղ մտնել պատճառների քննութեան
մէջ. չենք էլ ուզում ասել, թէ հնչական կուսակցութիւնը
մարտական խմբեր չի կազմել, բոլորովին զէնք չի մը-
ցրել երկրիւր և այլն: Մենք միայն արձանագրում ենք
այն իրողութիւնը, որ հնչական կուսակցութիւնը իր
առաջին քայլն անելով ագիտացիական շրջանի մէջ, այդ
տեսակ գործունէութեան կնիքը պահպանեց նաեւ իր հե-
տագայ քայլերում և անկարող գտնեց, չենք ասում՝
ըմբռնելու, այլ գոհացում տալու յեղափոխութեան
նորագոյն պահանջներին:

Այդպիսի հանգամանքներում շատ բնական է, որ
այդ կուսակցութիւնը հետզհետէ պիտի թուլանար, կոր-
ցնէր իր ոտքի տակի հողը՝ ձիւղ այնպէս, ինչպէս թու-
լանում էր իր ժամանակին Հայրենասիրաց Միութիւնը,
տեղի տալով հնչական կուսակցութեան:

Վերջացնում ենք մեր այս ընդհանուր և համառօտ

1) Դրա մի մասը ընկել է կառավարութեան ձեռքը:

տեսութիւնը: Ինչպէս ընթերցողը տեսնում է, Հնչակեան կուսակցութեան թուլանալու էական պատճառը մենք փնտռում ենք ոչ թէ այս կամ այն գործիչի կամ խմբի զեղծումների մէջ, ինչպէս այդ անում են երկու կողմի Հնչակեաններն էլ, այլ գլխաւորապէս կուսակցութեան գործունէութեան եղանակի մէջ: Եւ թէ Հնչակեան կուսակցութիւնը ցանկանում էր վերջ տալ իր խախուտ դրութեան, պահպանել իր գոյութիւնը իբր յեղափոխական մարմին, պարտաւոր էր իր ուշադրութիւնը դարձնել գլխաւորապէս այն փոփոխութիւններին, որոնք Հնարաւոր պիտի դարձնէին գործունէութեան պակասը լրացնել:

Տեսնենք հիմա, թէ ինչ եղաւ և թէ որքան հնարաւոր էր Հնչակեան կուսակցութիւնը ոտի կանգնեցնել: Այդ նպատակով նախ մի հարեանցի հայեացք ձգենք այդ ժամանակային Հնչակեան գործիչների բարոյական ընդհանուր մթնոլորտի վրայ:

ՀԱՅԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԲՍՐՈՅԱԿԱՆ

ՄԹՆՈԼՈՐՏԸ

Հնչակեան կուսակցութեան խախուտ դրութիւնը չէր կարող իր բացասական ազդեցութիւնը չթողնել Հնչակեան կազմակերպութեան բարոյական մթնոլորտի վրայ: Դա էր պատճառ, որ զանազան բախտախնդիրներ կարողանում էին յներս սպրդել՝ նրա մէջ և մինչև իսկ ղեկավարի դեր ստանձնել՝ որ լայն, ազնիւ ձգտումները մանրանում էին, հերոսները գաճաճանում, վատ կրքերը չէին զսպւում, կեղտոտները հաւատաւորում էին և լաւերը կոպրոմիսների դիմում:

Հնչակեան կուսակցութեան այդ մթնոլորտի վրայ հարկ ենք համարում կանգ առնել, որովհետև ինչ պայմանների ծնունդ էլ լինի, նա իր որոշ դերն է խաղացել և միութեան խնդրի մէջ բռնում է ոչ-երկրորդական տեղ. և որպէս զի այս անգամ ևս մի անգամ ընդմիջտ հեռացրած լինելը մեզանից մեղադրանքների որևէ առիթ, թողնելը մեր լսածները, մեր տեսածները և բաւականանալը դուռ հնչակեան աղբիւրներից քաղած փաստերով, շատ տեղ այդ փաստերի ստուգութեան պատասխանատուութիւնը ձգելով աղբիւրների հեղինակների վրայ:

Այդ աղբիւրներից մենք իմանում ենք, որ Հնչակեան զեղծումների բունը երկու մարմիններ են եղել՝ Պօլսի մասնաճիւղը և Կեդրոնը:

Պօլսի Հնչակեան վարչութիւնը 1895 թւականի սկզբին իբր անգամ հրաւիրում է Արփիար Արփիարեանին: Պօլսի Հնչակեան մասնաճիւղին չէր կարող յայտնի չլինել Արփիարեանի անցեալից գոնէ երկու փաստ — յեղափոխութեան պատրաւով Կովկասից վերգրած որոշ գումարի կլանումը և նրա նշանաւոր Մեղայազիրը: Եթէ այսուհանդերձ մասնաճիւղը դիմում է արդէն արատաւորած անձնաւորութեան աջակցութեան, դա պարզ ցոյց է տալիս, թէ որքան ստորացել էր արդէն այդ ժամանակ Հնչակեան գործիչների բարոյական մակարդակը և թէ որքան քիչ պահանջներ էր դնում Հնչակեան մասնաճիւղը իր պատասխանատու գործիչների նկատմամբ:

Հնչակեան Կեդրոնի ասելով՝ Արփիար Արփիարեանը անյայտ պատճառներով աջողել է ներս սպրդել Կ. Պօլսի Հնչակեան վարչութեան մէջ և դառնալ նրա

անդամ և նա՝ Կեդրոնը, խստիւ բողբոլել էր «այդ կամայական ընդունելութեան դէմ, իմանալով Արփիարեանի անցեալը»¹⁾, որպէս նաև ամենքին արդէն յայտնի լինելով մի քանի գծեր նրա այդ անցեալից: (Շրջաբերական Հնչակեան հին Կեդրոնի, № 1, ¹²/₂₄ օգոստոս 1896): Սակայն այդ դէպքում հասկանալի չեն այն ներքոյնը, որոնք տպագրւեցին «Հնչակում» յօգուտ Արփիարեանի, երբ Պօլսում տեղի ունեցաւ Դաշնակցականների փորձը նրա դէմ (տես «Հնչակ» 1896 № 2): Բացի այդ՝ նոյն խնդրի մասին ահա թէ ինչ տեղեկութիւններ ենք գտնում Հնչակեան վերակազմաւ Կեդրոնի 1 դեկտեմբեր 1896 Շրջաբերականի մէջ:

Արփիար Արփիարեան Կ. Պօլսոյ վարչութեան անդամակցած է նոյն վարչութեան անդամներուն հրաւերով: Պ. Ա. Արփիարեան ինքը կը կատարէր Կեդրոնին հետ Կ. Պօլսոյ վարչութեան պաշտօնական թղթակցութիւնները, ինչպէս նաև «Հնչակի» թղթակցութիւնները, որոնք Գ. Ս. ստորագրութիւնը կը կրէին: Ինչպէս կը տեսնուին Կ. Պօլսոյ ցոյցին ատեն եւ անկէ վերջ հրատարակած Պօլսոյ նամակներէն, ինքը իր «գրով» կը ղրկէր Կեդրոն գանձուելիք փոխանակագրերը...» և այլն:

Իսկ երբ Արփիարեանը Լոնդոն է գալիս, Կեդրոնի անդամները ամենասիրալիք ընդունելութիւն են ցոյց տալիս, «Հնչակը», «Ապտակը» բաց են անում նրա առաջ, իրենց հետ միշտ անբաժան են պահում նրան և ըն: (տես նոյն Շրջաբերական):

Արփիարի ընդունելութիւն խնդրի հետ կապած է նաև դրամական զեղծումների խնդիրը:

Հին Կեդրոնի ¹²/₂₄ օգոստոս 1896 Շրջաբերականի մէջ գտնում ենք հետևեալը.

Յայտնի է ամենքին, որ ինչպէս Կ. Պօլսի 1895 թւականի սեպտեմբերի ցոյցի միջոցին, նոյնպէս դրանից յետոյ՝ ամիսների ընթացքում՝ Կ. Պօլսի Հնչակեան վարչութիւնը մեծամեծ գումարներ ձեռք բերեց ազգային նպատակի, յեղափոխութեան եւ Զէյթունի անունով: Այդ ժամանակները Կ. Պօլսի Հնչակեան վարչութեան մէջ էր Արփիարեան: Յայտնի է նոյնպէս, որ այդ դրամական հաւաքումները կատարուում էին նաև ամեն տեսակ ընդի ու սպառնական միջոցներով, միջոցներով, որոնց դէմ քանիցս Կենտրոնս բողոքներ արեց Կ. Պօլսի թէ՛ Հնչակեան վարչութեան, թէ՛ հնչակեան անհատներին եւ «Հնչակում» էլ (№ 15 փետրվար 1896) Յայտարարութիւն տվեց՝ չըկամենալով վերոյիշած միջոցներով արած դրամական հաւաքումների նկատմամբ իր վրայ որեւէ պատասխանատուութիւն վերցնել, բայց, զըծ-ը աղաքաբար, Կենտրոնիս բողոքներն անլսելի մնացին, եւ սոսկալի սպառնալիքներով եւ միջոցներով իսկ սպանութիւններով մեծամեծ գումարներ ձեռք բերվեցան՝ Հնչակեան, յեղափոխութեան ու Ազգի անունով:

Այսպէս, երբ Կ. Պօլսի Հնչակեան վարչութիւնը, հակառակ Կենտրոնիս բողոքներին, այդպիսի ընթացք բռնեց, նա աղոթեց կարծ ժամանակում գումարել տասնեակ հազարներով ոսկիներ, ըստ որում հասարակութեան մէջ յայտնի անձնաւորութիւնների խօսքով, որպէս եւ Կուսակցութեանս պատկանող եւ ակամատես անդամների ումանց վկայութեամբ, մօտաւորապէս 15-20 հազար ոսկիի հասաւ ձեռք բերած դրամների գումարը:

Այդ գումարն, որ հաւաքվել էր Հնչակեան անունով, ինչպէս կարգադրվեցաւ եւ մեր մասը: Հնչակեան Կուսակցութեան Կենտրոնական Գանձարանը հասած գումարը միայն 1400 ոսկի է, եւ այդ գումարն էլ Կ. Պօլսի Հնչակեան վար-

1) Ահա այդ անցեալը:

«Արփիարեանը 1890-ին գնում է Կովկաս Խորէն նար Բէյին Լը տեսելու պաշտօնով», յեղափոխութեան պատրուակով ձեռք է ձգում եւ կլանում 2,000 ռ., Պօլսի քանտարիութեան ժամանակ «ամբաստանում է, իբրեւ յեղափոխականներ, Խորէն նար Բէյին, վահրամ Բէյ Տատեանին, ղօքտօր Թիքիարեանին», քանտից դուրս գալից յետոյ «ստեղծագործում է...» «Մեղայազիրը», քարոյական անկման այդ ամենաստոր ու ամենափայլուն արտայայտութիւնը, այդ ամենաաղտոտ հայելին, որ միակ ինքն ըստ ինքեան Արփիարեանի քարոյական մահի դրանքն է» եւ այլն:

(Ապտակ № 10, փետրւար 1897)»

չուր իւրեք հասցրեց Կենտրոնիս մեր կրկնակի դիմումներին յետոյ: Դրա հետ միասին Կ. Պօլսի Հնչակեան վարչութիւնը Կենտրոնիս հաղորդեց, թէ իր մօտ մնացել է ընդամենը երկու հազար ոսկինց քիչ աւելի գումար:

Իբր պատասխան այս պնդումներին՝ վերակազմեալ Կեդրոնական վարչութեան 1 դեկտ. 1896 Շրջաբերականի մէջ բերած են հետեւեալ բացատրութիւնները:

Արտատպելով հին Կեդրոնի յիշած՝ «Հնչակի» № 15 փետրուար 1896 թւականի համարի յայտարարութիւնը, վերակազմեալ Կեդրոնական վարչութիւնը ապացուցանում է, որ դա իրեն չի վերաբերում:

«Խնչակս կը տեսնէք այս յայտարարութիւնէն», քնաւ Կ. Պօլսի Մասնաձեւիւն խօսքը չը կայ մէջը: Եւ արդարեւ Կ. Պօլսի Հնչակեան վարչութիւնը ինք պահանջած էր այսպիսի յայտարարութեան մը հրատարակութիւնը, վստահի հանգանակութիւնները թէեւ վերջացած էին, սակայն զանազան քաղաքներ, նոյն իսկ Պօլսի կեդ. կոմիտեան խաբէրանքը ըստս էին դրամ հաւաքել: Կարելի չէ անշուշտ մտքէ անցունել թէ այս Յայտարարութիւնը կրնայ վերաբերել Կ. Պօլսի Մասնաձեւիւն. երբ Կեդրոնը կը հրաւիրէ հասարակութիւնը դրամը իրեն դրկել «Թերթիս հասցեով կամ Մասնաձեւիւնի միջոցով», չաւելցնել թէ Պօլսի Մասնաձեւիւնը դրամ յանձնելու չէ:

Եւ իբր ապացոյց, որ Հնչակեան նախկին Կեդրոնը իսկապէս դէմ չի եղել սպառնալիքով դրամ հաւաքելուն, Շրջաբերականում բերած է Հնչակի 1896 մարտ 21-ի համարից մի քաղաք, ուր իմիջի այլոց աւսած է.

«... Ազգին աղքատիկ տղաքը իրենց իրաւունքէն զրկողը, Զէյթունի հերոսները առանց վստողի, առանց հացի պահելու համար տարածում ընողը, Հայաստանի սովեակներուն համար անկարելիքը, երբ հաշիւ կուտայ արդարապէս ու զոհունի մը, ժողովրդային զգացումն է որ անոր դաժաւդին շուրջը սարսափահար կը գոչէ իր ասացումը — «Աստու մատը կայ»:

Ինչ վերաբերում է 15-20 հազար ոսկու խնդրին, վերակազմեալ Կեդրոնական վարչութիւնը բաւականանում է ջանալով իր մասնաձեւիւններին հաւատարմութիւնը որ ինքը ստացել է Պօլսի հաշիւները, թէեւ չի կարողանում չաւելցնել որ «հարկ եղած հաշուական քննութիւնը պիտի կատարէ մասնաւոր մասնօրէն»:

Այդպիսով վերակազմեալ Կեդրոնական վարչութեան Շրջաբերականը մուծն է թողնում Պօլսում ժողոված գումարների քանակութեան և գործադրութեան հարցը: Միւս կողմից պարզ է, որ հին Կեդրոնը դէմ չի եղել բռնի միջոցով դրամ ժողովելուն, թէեւ իր շրջաբերականում պնդում է հակառակը: Եթէ մեզ նկատեն, որ այս եղբայրացութիւնը բաւականաչափ հիմնաւորած չէ վերակազմեալների բացատրութիւններում, ապա մենք կ'աւելացնենք, որ եթէ հին Կեդրոնը իսկապէս հակառակ լինէր այդ միջոցին, նա մի սանտիմ անգամ չէր ընդունիլ այդ ճանապարհով ձեռք բերած գումարներից. մինչդեռ մենք տեսնում ենք, որ ոչ միայն նա սիրով ստացել է 1,400 ոսկու գումարը, այլև — զայն քանակով որ մնացած գումարներն էլ իրեն չեն ուղարկում — բացառաւորապէս է, «այդ 1,400 ոսկին էլ Կ. Պօլսի Հնչակեան վարչութիւնը հասցրեց Կենտրոնիս մեր կրկնակի դիմումներին յետոյ»:

Թէ ինչպէս կարող էին գործադրել Պօլսի այդ խոշոր գումարները, կարելի է ենթադրել հետեւեալից.

«Թող ներուի մեզ հարցնել այդ դիմակաւոր պարոններուն, թէ Պօլսի մէջ Զէյթունի ու յեղափոխութեան անունով հաւաքուած ահագին գումարները Պոլսի քաղաքի ու Բուսանիոյ ինչպէս նաեւ ուրիշ տեղերու մասնաձեւիւններուն քուէները շահելու, ընկերներու խիղճները վարձելով զանոնք գործիք ընկու, Արփիարի եւ իր արքանաւորներու Լոնտոնի ու Բարիզի մէջ գեղի կեանք

մը վարելու եւ Պօլսի մէկ քանի «յեղափոխական»-ներու տունները թաւշեայ ու ծանրագին կահ կարասիներով զարդարելու համար յատկացնելը, միթէ հանրութեան դրամը իր նպատակին գործածել է:

Ասոնք զբաւարարութիւն չըլլալէ զատ, դեռ շատ աղօտ կերպով կը պատկերացնեն ծրարութիւնը: Արդէն Պոլսէն հասնող բազմաթիւ ընկերներ ու արժանահաւատ անձեր անհերքելի փաստերով կը հաստատեն այս բոլորը, եւ կը հաւատան թէ Պօլսի մասնաձեւիւնը զեղծումներու քոյն եւ խաչագողներու որջ մ'է եղած «ընդ հոլանաւորութեամբ Արփիար Էֆէնտի» (Շրջաբերական Բուսանի չնչ. մասնաձեւիւն, թիւ 1):

Ընթերցողի հետ միասին մենք ևս տրամադիր ենք կարծելու, որ այս տողերը հին Կեդրոնի կողմակից մասնաձեւիւն գրածը լինելով կարելի է չափազանցութիւն համարել:

Իսկ թէ ինչպէս է ինքը Կեդրոնը գործածել իր ստացած գումարները, մենք այդ էլ չգիտենք: Գիտենք միայն այն, որ ոչ միայն զէնքի համար չեն գործադրել երկիր չեն ուղարկել, այլ և

«Երբեք մտածած չեն Երկրին մէջ թէ գործող եւ թէ քանտարկուած գործիչ-ընկերներու նիւթական թշուառութեան մասին, եւ անոնց դրամական օգնութիւններ բոլորովին զլացած են: Նոյնիսկ հակառակ իրենց եղած դիմումներուն մերժած են դրկել փոքրիկ գումարներ քանտարկու խորքը հիւծող թանկագին ընկերներ ազատելու»:

«Նկատելով որ հաշուետուներն չունին, որով կարելի ըլլայ հաստատել թէ Կուսակցութեան դրամները խղճատուէն գործածուած եւ Կուսակցութեան նպատակին յատկացուած են: Մինչ Կուսակցութեան դրամը մեծ մասամբ անպէտ տեղը ծախսուած ըլլալը յայտնուած է»: (Վճռագիր)

Կեդրոնին «անյայտ պատճառներով ներս սպրդած», իր կեղտոտ անցեալով յայտնի Արփիարը Լոնդոն է գալիս: Եթէ չափազանցեալ է վերակազմեալ Կեդրոնական վարչութեան 1 դեկտեմբեր 1896 Շրջաբերականից առաջ բերած «ամենասիրալիք ընդունելութեան» փաստը, նրա հասցէին ուղղւած ճառը ևն. . . մի բան անհերքելի է մնում — «լրտես, յեղափոխական դրամ անհերքելի է մնում — հեղինակնշանաւոր Մեղայագրի» Արփիարը ընդունւում է Կեդրոնի մէջ և համարւում է ընկեր: Կեդրոն մտնելով, Արփիարը սկսում է ինտրիգներ սարքել: Կեդրոնը իմանում է այդ ինտրիգների մասին: Ի՞նչ միջոցներով — «լրտեսներ» կարգելով և ում — Հնչակեան կուսակցութեան Զէյթունի «Ընդհանուր ներկայացուցիչ» Աղասուն և Զէյթունի Ընդհանուր Հրամանատար Ապահին: Բայց աւելի լաւ է խօսքը թողնել հէնց իրեն հին Կեդրոնին.

«Արփիարեանի Լոնդոն գալուց ի վեր չանցաւ երկու երեք շաբաթ՝ այլ եւ այլ կասկածներ ծագեցան նրա ընթացքի նկատմամբ, որ նա ունեցաւ նոյն իսկ իր Լոնդոն եղած միջոցին: Զէյթունից եկած վեց Հնչակեաններից երկուսի՝ Աղասիի եւ Ապահի «լրտեսութեամբ» ծնող բերած վկայութիւններով, որպէս եւ ուրիշ վկայութիւններով ակնյայտնի եղաւ ու ապացուցվեց Արփիարեանի լարած դաւերն ու ինտրիգները»:

Սրանից յետոյ Արփիարեանը արտաքսուում է Հնչակեան կուսակցութիւնից, և նրա վճռագրի տակ ստորագրած ենք տեսնում իմիջի այլոց նաև Տամատեանի, Աղասու և Ապահի անունները:

Ուշագրութեան արժանի է և այն, թէ ինչ չարախնդրութեամբ Կեդրոնը շեշտում է «լրտեսութեամբ» խօսքը, չակերտների մէջ առնելով նրան.

Ահա՛ բարոյական միջոցը... Ինտրիգների, կասկածամտութեան, բացարձակ կեղծիքի, զեղծումների ու լրտեսութեան այս միջավայրի հետ ծանօթանալուց յետոյ, նոյնիսկ ամենաներողմիտ ընթերցողի համար հասկանալի են դառնում մի խումբ հնչակեանների

զայրոյթով ցուած Ընդաբերականի հետեւեալ տողերը:

«Կեդրոնը... աւելի կը նմանի Եղաթափի քան թէ Կեդրոնի, եւ հոն տիրող «խէժիմը» սուլթանականէն տարբերութիւն չունի»:
(«Մի խաբուիք», 30 մարտ 1897, Լոնդոն):

Ինչպէս տեսնում է ընթերցողը, այս տեսակ բարոյական միջոցառումը չէր կարող գրաւական լինել Հնչակեան Ընդհանուր Ժողովի յաջող ելքին: Դիմենք հիմա այդ ժողովին:

Հնչակեան Ընդհանուր Ժողովի Ժողովուրդ

Հնչակեան Ընդհանուր Ժողովը պիտի կայանար հէնց այդ ժամանակները: Երբ մի կողմից Հնչակեան Կեդրոնը ժողովի հրաւիրագրեր էր ուղարկում Հնչակեան մասնաճիւղերին, միւս կողմից Հնչակեան կազմակերպութեան մէջ կամաց կամաց պատրաստուում էր ընդգրկմադիր կուսակցութիւնը: Հնչակեան կուսակցութիւնից արտաքսուած Արփիարը, Պարիզ գնալով, բոլորովին տրամադրութիւն չի ցոյց տալիս իր դէմ արձակած վճռին համակերպուելու: Պարիզից նա շարունակում է սերտ կապ պահպանել Հնչակեան մասնաճիւղերի և գործիչների հետ, նոր թերթի պատրաստութիւններ է տեսնում, ծըրպիրներ է յղանում և լին... Ընդգրկմադիր կուսակցութիւնը քիչ քիչ սկսում է ձևակերպուել և ուժ է ըստանում, երբ Արփիարը լարում է Ռշտունուն ու Լոնդոն ճանապարհ ձգում և երբ Ռշտունի, Տամատեան և մի քանիսներ հեռանում են Հնչակեան Կեդրոնից: Դժուար չէ երևակայել թէ ինչ կը լինէր այսպիսի պարագաներում կատարած Ընդհանուր Ժողովը: Յիշենք այստեղ, որ Հնչակեան Կեդրոնը պընդում էր — իբր թէ կուսակցութեան ներքին օրէնքների վրայ հիմնելով — որ Ընդհանուր Ժողովին մասնակցելու իրաւունք ունեն բացի երկրի մասնաճիւղերից նաև Կովկասը, Պարսկաստանը, Կիպրոսը, բայց ոչ Բուլղարիան, Պոլսի մասին, Ամերիկան, Եգիպտոսը: «Ընդգրկմադիրները» պահանջում էին և վերջիններիս մասնակցութիւնը: Այս խնդիրը, որ ահագին ժամանակ է խլել և առիթ է տւել երկար աղմուկների, իհարկէ չէր բռնում ոչ կանոնագրից և ոչ այլ հիմունքներից, այլ պարզապէս այն վերաբերումից, որ ունէին «արտասահմանեան» մասնաճիւղերը դէպի Հնչակեան Կեդրոնը:

Մի ուրիշ հանգամանք ևս մեզ պարզ ապացուցանում է, որ Ընդհանուր Ժողովի գլխաւոր զբաղմունքը պիտի լինէր ոչ թէ այլևայլ ընդհանուր յեղափոխական խնդիրներ, այլ կատարած զեղծումների քննութիւնը, աւելի պարզ ասած՝ հին և նոր Կեդրոնի խնդիրը:

Հին Կեդրոնի կարծիքով

«Բնականաբար, նա (այսինքն Պոլսի դրամների խնդիրը) պէտք է լինէր ընդհանուր ժողովի ամենածանր խնդիրը: (Երջարեական 12-24 օգոստոս, 1896 N 1):

Իսկ միւս կողմից, «Ընդգրկմադիրների» կարծիքով

«Ընդհանուր ժողովը զիւաւորապէս պաշտօն ունի Կեդրոնին 9 տարւան համարը առնել եւ ընտրել նոր Կեդրոնական Արքունիքը»:
(Երջ. Վեր. Կեդր. Վարչութեան, 1 նոյեմբեր 1896):

Աւերեմ, «Ընդգրկմադիրները» հաշիւ պիտի պահանջէին Կեդրոնից, Կեդրոն էլ Պոլսի մասնաճիւղից: Եւ որովհետեւ ոչ մի կողմը հնարաւորութիւն չունէր բաւարար հաշիւ ներկայացնելու, շատ հաւանական է, որ

Ընդհանուր Ժողովի այս «ամենածանր խնդիրը» հէնց սկզբից բաժանում առաջ բերէր: Բացի այդ, որքան պարզ էր, թէ հին Կեդրոնը ոչ մի տրամադրութիւն չէր ցոյց տալիս Հնչակեան կուսակցութեան դեկը ուրիշին զիջանելու, նոյնքան պարզ էր և այն, որ մի շարք գործիչներ չէին խոյս տալիս հազգային պաշտպանութեան՝ այդ ծանր լուծը իրենց վրայ առնելուց:

Ահա թէ ինչու աւելի նպատակայարմար էր երկու մասի բաժանուելը: Իւրաքանչիւր մի մասը իր կողմնակիցներին անհամեմատ աւելի մեծ դիւրութեամբ կարող էր հաշիւ ներկայացնել և, բացի այդ, այդ բաժանումը հնարաւոր էր դարձնում և հին Կեդրոնի գոյութիւնը և նորի ստեղծելը:

Այդպէս էլ եղաւ:

Առաջին ժողովը ընդգրկմադիրների Ընդհանուր Ժողովն էր, որ տեղի ունեցաւ 1896, օգոստոս 8/20-ին:

Այս հանգամանքը մեզ իրաւունք էր տալիս սպասելու, որ երկար տարիների ընթացքում բուն գործի մէջ երկուստեք գործիչները, մի անգամ մի տեղ համախմբուած, իւրաքանչիւր իր անձնական փորձառութիւնը ընկերներին յայտնելով, լուրջ քննութեան կ'ենթարկէին ժամանակակից դրութիւնը, կ'որոշէին յեղափոխութեան իրական պահանջները, նրանց գոհացում տալու համար գործնական միջոցներ կը գտնէին, և նախկին խնամակալութեան դառն ու դեռ թարմ տպաւորութեան տակ մի անգամ ընդմիջող զգաւնքով կը հրաժարէին որ և է խնամակալութեան լծից ու վստահ իրենց ուժերի, միմիայն իրենց ուժերի վրայ, սերտ կապ հաստատած իրար մէջ, կը ցրէին իրենց տեղերը, նոր ծրագրով, նոր եռանդով, ընդհատուած գործը վերսկսելու: Յոյս ունէինք, որ նրանք հեռատեսութիւն կ'ուսնենային հէնց ժողովի ժամանակ արմատախիլ անելու կամ գոնէ չեզոքացնելու իրենց մէջ ընկած որոմները: Այս պայմաններում միայն հնարաւոր էր վերջ տալ Հնչակեան կուսակցութեան «տագնապալից» գրութեան և մաքրել հեղձուցիչ միջոցառումը:

Մենք այն ժամանակ դեռ չգիտէինք, որ Հնչակեան Կեդրոնը իր կողմնակիցների հետ միասին կազմելու է առանձին, նոյնպէս Ընդհանուր Ժողով, որ Հնչակեան կազմակերպութիւնը իրականապէս բաժանուելու է երկու մասի: Մեզ յայտնի չէին նոյնպէս շատ իրողութիւններ Հնչակեան կուսակցութեան վերաբերեալ, որոնց մասին քիչ վերև խօսեցինք: Բայց որովհետեւ ընդգրկմադիրների ժողովը յայտարարեց իրեն Հնչակեան Ընդհանուր Ժողով մենք հաւատացինք, մանաւանդ որ մեզ յայտնի էր, թէ նրան մասնակցում էին համարեա բոլոր հնչակեան գործիչները:

Իսկ թէ այդ ժողովը քաջութիւն պիտի ունենար համարձակօրէն անցեալի մէջ խոշոր փոփոխութիւններ մտցնել, դրա ապացոյցը մենք ունէինք: Չնայած այն լարած դրութեան, որ գոյութիւն ունէր մինչև այդ ժամանակ Դաշնակցութեան և Հնչակեան կուսակցութեան միջև, Հնչակեան ժողովը չվարանեց դեռ սեպտ. 12-ին, այսինքն համարեա իր կանոնաւոր պարապմունքների, սկզբին, դիմել մեզ միութեան կամ համերաշխ գործակցութեան առաջարկութիւնով: Դեռ այդ դիմումից առաջ, Լոնդոն պատահած մեր մի երկու ընկերների տեղեկութիւնների հիման վրայ, մենք արդէն նպատաւոր կարծիք էինք կազմել այդտեղ գումարած

Հնչակեանների տրամադրութեան մասին: Աւելորդ է ա-
սել, թէ, չնայելով անցեալի բոլոր դառն փորձե-
րին¹⁾, ինչ բաւականութիւն պատճառեց այդ դիմու-
մը Դաշնակցական մարմիններին, որոնք այդ ժամանակ
իրենց գործունէութեան սահմանը լայնացնելու ձգտման
մէջ աւելի քան երբեք զգում էին Հնչակեան կու-
սակցութեան հետ համաձայնութեան անհրաժեշտու-
թիւնը:

Դիմումն արած էր Հնչակեան Ընդհանուր Ժողովի
յանձնարարութեամբ առժամեայ վարչութեան կողմից
և այնպիսի մի ժամանակ, երբ կուսակցութիւնը դեռ ևս
չէր վերակազմել, ուրեմն երբ դեռ յայտնի չէին կա-
րող լինել կատարելիք փոփոխութիւնները: Հասկանա-
լի է, թէ ինչ հետաքրքրութեամբ մենք պիտի սպասե-
ինք ժողովի ելքին և թէ ինչու մենք մեր պատասխանի
մէջ, փափագ յայտնելով հանդերձ կանոնաւոր բանակ-
ցութիւններ սկսած տեսնել Հնչակեան կուսակցու-
թեան վերակազմելուց յետոյ միայն (այդ փափագը
յայտնեցինք անցեալի «փորձերը» ինկատի ունենալով
և ոչ «գործերը», ինչպէս «Մարտ»-ի խմբագրութիւնն է
կարդացել), պատրաստականութիւն յայտնեցինք միե-
նոյն ժամանակ բանակցել մասնաւոր կերպով և
փոխադարձաբար ծանօթանալ: Այս մասնաւոր տեսակ-

1) Ահա Հնչակեան կուսակցութեան հետ միութեան մա-
սին տեղի ունեցած առաջին բանակցութիւնների կարծ պատ-
մութիւնը: 1890 թւի ամառը Պոլսի ցոյցից յետոյ, երբ կազ-
մակերպւում էր «Դաշնակցութիւնը», Ռուսաստան եկաւ Պոլսի
Հնչակեան ներկայացուցիչներից մէկը (Խ.): Մեր ընկերների
դրա հետ ունեցած տեսակցութիւններն ու խօսակցութիւնները ա-
ռաջ բերին միութեան մասին որոշ համաձայնութիւն, որի պայման-
ները ինքը ներկայացուցիչը հաղորդեց «Հնչակ»-ի խմբագրու-
թեանը: Իբր պատասխան այդ զրուցման ներկայացուցիչը ստա-
ցաւ խմբագրութիւնից մի բաւականին պերճախօս հեռագիր —
«C'est enjoutillag» (այդ երեխայութիւն է), — որով խմբագրու-
թիւնը կորուկ կերպով վերջ էր դնում միութեան այդ առա-
ջին փորձին: Անցան դրանից յետոյ շաբաթներ, ամիսներ, և
ահա Դաշնակցութեան Կեդրոնական վարչութեանը (այն ժա-
մանակ ապակեղծացում դեռ չէր ընդունւած) ներկայացաւ
մի ուրիշ պարոն (Մ.), ունենալով իր ձեռքին Հնչակեան կու-
սակցութեան երկու պատասխանատու մարմիններից իրեն տուած
զբաւուր լիազօրութիւնները մեզ հետ բանակցելու եւ
համաձայնութեան վերջնական պայմանները
տեղի ունեցող ստորագրելու համար: Այդ լիազօրու-
թիւններից մէկը կրում էր Հնչակեան կուսակցութեան Կեդրո-
նի կնիքը, միւսը «Հնչակ»-ի խմբագրութեան: Կրկին սկսեցին
խօսակցութիւններ: Պաշտօնական ներկայացուցիչն միացաւ եւ
վերոյիշեալ անառնջ բանակցողը, ու վերջիվերջոյ մշակեցին
համաձայնութեան նոր պայմաններ, որոնք — երկու օրիսակ —
ստորագրեցին թէ դաշնակցականների եւ թէ հնչակեան եր-
կու ներկայացուցիչների կողմից: Համաձայնութեան թղթի այդ
օրինակներից մէկը մնաց մեր վարչութեան մօտ, միւսը յանձ-
նեց հնչակեան լիազօրին ուր հարկն է ուղարկելու համար:
Ի՞նչ եկաւ այդ երկրորդ օրինակի գլխին — մինչեւ այժմ էլ
յայտնի չէ մեզ: Փաստը սա է սակայն, որ այն ժամանակ,
երբ մենք ամէն բան արդէն վերջացած համարելով՝ դրամ
էինք փոխադրում «Հնչակ»-ի խմբագրութեանը եւ սպասում
միայն թերթի մէջ միութեան յայտարարմանը, — մի գեղե-
ցիկ օր ստացանք «Հնչակ»-ի խմբագրութիւնից ... համա-
ձայնութեան նոր պայմաններ ... Ի՞նչպէս կարող էր պա-
տահել այս ամէնը — դա մի հանելուկ է, որը զուգէ մա-
սումը կարող են պարզել պայմանագիրը ստորագրող հնչակեան մի
ներկայացուցիչը (Խ.) եւ մի երրորդ հնչակեան (Հ. Խ.), որոնք,
երբեւ արդէն մեզ հետ միացածներ, թէեւ Կովկասից մեկնեցան
դաշնակցական գործերով, բայց միանգամայն անսպասելի կեր-
պով փոխանակ իրենց յանձնարարած տեղերը զնալու՝ ծոկ
էին իրենց ծանապարհը դէպի «Հնչակ»-ի խմբագրութիւնը...
Ինչեւիցէ, բայց յիշեալ նոր պայմանները այնքան հեռու էին
արդէն ընդունւած եւ ստորագրւած պայմանագրից եւ այնքան
վրդովիչ, որ կարող էին անել միայն այն, ինչ արեցին — այն
է վերջնապէս վիճեցնել միութեան խնդիրը...

ցութիւնը, նոյնիսկ Ընդհանուր Ժողովի ընթացքում,
հնարաւոր կը դարձնէր միութեան յաջողութեան շատ
պայմաններ առաջուց նախատեսել և մի քանի խոչըն-
դոտներ հէնց սկզբից վերացնել...

Այս բոլոր յոյսերը մենք տածում էինք և
մասամբ շարունակում էինք տածել վերակազմեալ¹⁾
Հնչակեան ժողովի աւարտումից յետոյ էլ, քանի դեռ
յայտնի չէին մեզ ոչ այդ ժողովի մօտաւոր գոյնը, ոչ
առաջ գալիք փոփոխութիւնները, ոչ միջնորդութի
ապա-
կանութեան սաստկութիւնը և ոչ ազնիւ հնչակեան
գործիչների անզօրութիւնը այդ միջնորդութի
դէմ մա-
քառելու:

Սակայն շատ ժամանակ չանցած, իրար ետեւից տե-
ղացող փաստերը հետզհետէ մեզ յուսախաբ արին և
վերջիվերջոյ բերին այն համոզման, որ միութեան հարցը,
հակառակ վերակազմեալ Հնչակեան Ընդհ. Ժողովի
արտայայտած անկեղծ ցանկութեան և Դաշնակցական
մարմինների լիակատար յօժարութեան, անկարելի է
իրականացած տեսնել:

Անցնենք դրա պատճառներին: Տեսնենք, թէ վերա-
կազմեալ Հնչակեան Ընդհ. Ժողովը, միութեան կամ հա-
մերաշխ գործակցութեան խնդիրը դնելով, ինչ դրական
միջոցներ ձեռք առաւ այդ խնդրի ապագան ապահովե-
լու տեսնելու, թէ կարողացա՞ւ նա արդեօք մնալ յեղա-
փոխական գործող մարմին, պահպանել իր յեղափոխա-
կան սկզբունքները և այլն... Սակայն հէնց այստեղ էլ
պարագ եմք համարում յայտնել, որ այս բոլոր պա-
հանքերը մենք պարտաւոր ենք դնելու իսկապէս վե-
րակազմեալ կեդրոնական վարչութեան և ոչ ամբողջ
կուսակցութեան, որովհետեւ Ընդհանուր Ժողովը, ընտ-
րելով նոր կեդրոնական վարչութիւն, համարեա թէ
ամէն ինչ ձգել էր նրա վրայ, ամէն ինչ նրան էր հա-
ւատացել:

Այդպէս վերակազմեալ կեդրոնական վարչութեան
18 նոյեմբեր 1896 Հռչաբերականի մէջ կարդում
ենք հետեւեալ տողերը.

«Ընդհանուր Ժողովը զլիաւորապէս պաշտօն ունի կեդրոնին
9 տարուան համարը առնել եւ ընտրել նոր կեդրոնական վար-
չութիւնը, որ ինքը պիտի որոշէ կատարելիք գոր-
ծերը, հետեւաբար ի՞նչ է գաղտնիք երեւան գալու
հաւանականութիւնն չը կայ»:

Ընթերցողից խնդրում ենք ուշադրութիւն դարձնել
այն բանի վրայ, որ այս տողերը գրւած են ոչ թէ ժո-
ղովից առաջ, այլ յետոյ, ուրեմն հաստատում են այն,
ինչ արդէն կատարւած է եղել:

Բացի այդ «Մարտ»-ի թիւ 10-ի մէջ նոյն նիւթի վե-
րաբերմամբ գտնում ենք հետեւեալը.

«Հնչակեան իւրաքանչիւր ընկեր ժողովին սեղանին վրայ
դրաւ իր փորձառութեան յիշատակագիրը, որուն ամէնուն
հաւաքական եզրակացութիւնն էր՝ ընդլայնելով
յեղափոխական կուսակցութեան շրջանակը, կեդրոն մը
տեղծել ազգային պաշտպանութեան»:

Անսպասելի և անմխիթա՞ր եզրակացութիւն...

«Աշխարհիս ամէն կողմէն Հնչակեան ընկերները թէ՛
իր պատգամաւոր կուսակցութեան բոլոր խաւերուն,
թէ՛ իր արգային փրկութեան հինաւուրց հնչակեան

1) Երբ հին Կեդրոնը իր կուսակիցների հետ միասին կազ-
մեց նոյնպէս Ընդհանուր Ժողով, առաջինը ինքն իրեն կոչեց
«վերակազմեալ»:

զինւորներ. . . Հայրենիքի աղէտներուն արիւնակաթ սըր-տով վկաներ, հայրենիքի փրկութեան հաւատքին ան-ընկճելի հաւատարմներ» (Վերակազմեալների «Հնչակ», 24 սեպտեմբեր 1896) 9 տարւայ գործունէութիւնից յե-տոյ, հազար և մի դժւարութիւններ յաղթելով, գալիս են, համախմբում, առաջին անգամ Ընդհանուր ժողով գումարում, այն էլ կուսակցութեան տագնա-պալից դրութեան միջոցին, որպէսզի. . . կա տարւե-լիք գործերի մասին լուծութիւն պահանջեն, մեան ընդ-հանուր խօսակցութեան այն սահմանում, որից դուրս կարող է ո՛րէն գաղտնիք երևան գալ ընտրեն մի կեդ-րոն «հազգային պաշտպանութեան» (!!!), յանձնեն նրան կատարելիք գործերի որոշումը և ցրեն. . . Այս բոլորը իսկապէս դառն է, ցաւալի և բողբոջի պատիւ չի բերում հնչակեան գործիչների յեղափոխական հա-սունութեան. . .

Ահա ձեզ և «սահմանափակ կեդրոնացում», որ իբր թէ մտել է վերակազմեալ Հնչակեան կուսակցութեան կանոնագրի մէջ:

Բայց այսպէս կամ այնպէս, երբ վերակազմեալ Հնչ-ակեան կուսակցութիւնը իր ամբողջ գործի ղեկը դը-նում էր նորընտիր կեդրոնական վարչութեան ձեռքը, նրան էր յանձնում և միութեան խնդրի բանակցու-թիւնները, մեզ մնում էր միայն մեր պահանջները դնել գլխաւորապէս այդ վարչութեան: Տեսնենք ուրեմն, թէ որքան յաջողութեամբ է նա առաջ տանում յեղափո-խական գործը, թէ պահանջներ է նա արգելք յեղափոխա-կան սկզբունքները, տեսնենք նրա վերաբերումը դէպի Դաշնակցութիւնը, որի հետ յանձնարարած էր իրեն միութիւն առաջացնել. փորձենք հասկանալ ուսաս-յերի դէմ սկսած արշաւանքի օգտակարութիւնը. տես-նենք, վերջապէս, թէ ո՞վքեր են այն ղեկավարները, թէ կեդրոնական վարչութեան մէջ և թէ նրա շուրջը, ո-րոնք ոտի պիտի կանգնեցնէին Հնչակեան կուսակցու-թիւնը, և թէ որքան կարող էին անկեղծ լինել նրանց միութեան քարոզները:

ՎԵՐԱԿԱԶՄԵԱԼ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՈՒԺԸ

«Մարտ»-ի առաջին համարի առաջին յօդւածում կարգում ենք:

«Մեր անցեալը, մեր փորձառութիւնը, զօրեղ կազմակեր-պութիւնը որով օժտուած ենք կը ծանրացնին մեր վրայ այն-պիսի պարտականութիւններ, որոնց ենթարկւած չեն ուրիշ ոչ մէկ նայ անհատ, ուրիշ ոչ մէկ Յեղափոխական կուսակցութիւն»:

Այս խորհրդաւոր խօսքերը, համարձակ տօնը, Հնչ-ակեան կուսակցութեան վրայ ծանրացած բացառիկ պարտականութիւնները, անշուշտ մեծ տպաւորութիւն են թողնում ընթերցողի վրայ և ակամայ տրամադրում են նրան երևակայելու այդ կուսակցութեան մէջ ան-սովոր մի ուժ, չտեսնւած մի գործ:

Տպաւորութիւնը աւելի է սաստկանում, երբ հաս-նում ես հետեւեալ տողերին.

«Հնչակեան կուսակցութիւնը վերակազմուելն ի վեր լուծ-թեան մէջ աշխատելով այնպիսի զօրաւոր դիրք մը ստացաւ, ազգային այնպիսի մեծամեծ շա-հեր իր պաշտպանութեանը տակ առաւ որ գերա-գոյն պարտականութիւն մըն է իրեն համար ամէն մէկ քայլը խորհելով եւ հաշուելով փոխել»:

Իսկ № 2 «Բան մը ըրէք» յօդւածի մի քանի տո-ղերը աւելի ազդու կերպով են պատկերացնում վե-րակազմեալ կուսակցութեան զօրաւոր դիրքը (ապրիլ 97):

«Բան մը ընել», բայց ատկէ աւելի ինչ դիւրին բան կայ: Հայ ժողովուրդը ծնած է ոչ թէ տասնեակներով, այլ հարիւրներով, այլ հազարներով հայրենանուէր, անձ-նուրաց, քաջ երիտասարդներ. . . Եւ յետոյ, ուսմբը, ու-ժանակը այնպէս դիւրութեամբ կարելի է Պոլիս մտցնել ինչպէս Վառնայէն բերած հաւկիթը ու Միլանի կարսղը: Քանի մը մա՞րդ սպանել, — ճանձ սատկե-ցնելու չափ հեշտ գործ է: Թիւրք փաշաներ մէջտեղէն վերցնել — ո՞րը կուգես, դրամատուններ, պաշտօնա-տուններ կոխել, — Վոսփորի վրայ հաճոյալիւր ուղեւո-րութիւն մը ընելն աւելի դիւրին է. . .»

Դժւար չէ երևակայել, թէ այս տողերը ի՞նչ չար նախանձ կը շարժեն Պօլսի մեր ընկերների սրտերում, որքան չնչին կըզգան իրենց՝ Բարկէնի, Գնունու հոգի-ները վերակազմեալ վարչութեան այս առասպելական ուժի դիմաց. . .

Նոյն համարից բերենք մի կտոր, որ աւելի պարզ գաղափար է տալիս հին և նոր յեղափոխական կազ-մակերպութիւնների մէջ եղած տարբերութեան մասին,

«Իրենք (անձնուէր գործիչները) բաւական հեռատես եւ կարող չի գտնուեցան ազգային դատին հա-մար կեդրոն մը ստեղծելով ամբողջ հայու-թիւնը անոր շուրջը բոլորելու: Յեղափոխա-կան կուսակցութիւններն ալ, կամ աւելի ճիշդը անոնց վարիչներն ալ, ո՛չ միայն չուզեցին մօտենալ տա-ղանդի ու դրամի դասակարգերուն այլ եւ ըմբի ինչ որ կարելի էր գտնուէր իրենցմէ հեռացնելու համար: Հիմա ալ չը խօսինք այդ անցեալին վրայ: Հնչ-ակեան կուսակցութեան Ընդհանուր ժողովը այս ա-մէնը փոխեց, ժողովը բաղկացած չէր վերացական կամ ինքնամոլ ընկերների, Հայ ժողովուրդը, Թիւրքիոյ կացութիւնը լաւ գիտցող ու եւրոպական քաղաքա-կանութեան հետամուտ ժողովականները նոր ճամ-բայ մը գծեցին ապագային համար. վեց ամիս ի վեր է որ կուսակցութիւնը այդ ճամբէն կը յառաջանայ»:

Ուրեմն՝ Հնչակեան կուսակցութեան Ընդհանուր ժողովը «այս ամէնը» փոխել է: Նա ուրեմն ընտրել է այն բաղձալի կեդրոնը, որի շուրջը ամբողջ հա-յու-թիւնը պիտի բոլորի: Նա մօտեցրել է յեղափոխու-թեան գործին տաղանդի և դրամի դասակար-գերը և անշուշտ տաղանդի դասակարգը ամփոփ-ւել է գլխաւորապէս կեդրոնական վարչութեան մէջ այլապէս նրան չէր սազել «հազգային պաշտպանութեան կեդրոն» կոչումը. . .

Դրամի դասակարգն էլ վերակազմեալ կուսակցու-թեան է մօտեցել: Վերացած է ուրեմն այն առաջ-նակարգ խոչընդոտը, որ ամէն մի քայլափոխում գա-լիս ցցում է գործիչի առաջը. . . Այդ է գուցէ պատճառը, որ վերակազմեալ վարչութիւնը կարողա-նում է զարմանալի դիւրութեամբ ուսմբ, ուժանակ փո-խադրել, դրամատներ կոխել. . .

«Հայ ժողովուրդը, Թիւրքիոյ կացութիւնը լաւ գիտա-ցող ու եւրոպական քաղաքականութեան հետա-մուտ ժողովականները նոր ճամբայ մը գծեցին ա-պագային համար»:

Այդ «նոր ճամբան», որով կուսակցութիւնը «վեց ամիս ի վեր» (հիմա կարելի է ասել 30 ամիս ի վեր) կը յառաջանայ տաղանդի առաջնորդութեամբ,

այնքան խորհրդաւոր և միաժամանակ դիւթիչ է, որ երբ յանկարծ լսում է «Մարտ»-ի ցատկոտ բացագանչութիւնը, «Այսքան զարհուրելի փորձութիւններէ վերջ, այսքան դառնաթոյն բաժակներէ յետոյ հայ ժողովուրդը չզգար տարբեր առաջնորդ ու թեան մը պէտքը (թիւ 1, հՀատ չի խօսինք)», — որ յեղափոխականը կարող է իրեն զսպել և գլխապատառ չնետել այդ ամենակարող առաջնորդներէ գիրկը:

Սակայն... հէնց նոյն «վեց ամսւայ» ընթացքում

1. Զիթնանը գրում է Սուրենին (Կեդրոնի անդամ):

97 Յունվար 7

Ազնիւ ընկեր,

«Ստացած եմ նամակդ, եւ շատ տագնապեցայ երբ այդպէս պատկերացուեցաւ աչքիս առջեւ ձեր տնտեսական վիճակը. միակ միութարանք մը ունեցայ, այն էր, Մօլտօնի դրամի մասին բան պարզ չէիր. ուստի խորհեցայ, թէ այդ նամակդ գրելէդ ետքը շուտով ստացած կըլլաք դայն եւ քու անտեսութեամբ կապիրք մինչեւ կարող կըլլանք կ'ըրի կ'գումարներ մը զրկել:

Շիտակն ըսելով, նամակդ ոտքս գետնէն կտրեց. յոստամ թէ կապրիք մինչեւ որ մենք կարենանք մեր նպատակներն Ձեզ հասցունել:

Եթէ վարչութեանդ գանձին պատճառաւ է որ անցադիրը կուգես, այդ խնդրոն all right կընենք... Եւ այն գաղափարը առի այդ գրելէդ թէ անօթու թեան խարազանը պիտի ցրուէ Ձեզ:

Քիչ մ'ալ զէվզէ կ'ըլլիւն (ինքն է ստորագրածել) պիտ ընէի, իսկ ժամանակս չներեր այս օր, շատ զրազած եմ. ջերմ սիրով բարեւելով քեզ մնամ քոյդ:

Գ. Զիթնան

«Յուսամ թէ կապրիք» — «միութարում է պ. Զիթնանը եւ չի սխալուում: Կեդրոնի անդամները ապրում են, երեւի Մօլտօնի դրամը վրայ է հասնում և մինչև իսկ թող չի տալիս, որ «անօթութեան խարազանը» ցրուէ «ազգային պաշտպանութեան Կեդրոնի» անդամներին:

2. Տամատեանը գրում էր Կեդրոնին 1897 փետրւար 1-ին, Մանչեսթրից:

«Ձեմ կրնար պատմել թէ ուտելիքի եւ այլ ծախքերում մէջ ո'րչափ խնայողութիւն ըրի, որպէս զի նոյն իսկ այստեղի ամենամտերիմ ընկերներու ալ բոլորովին չմերկացնեմ մեր կացութիւնը, իրենց օգնութեան կաքօտելով...»

«Այսօր մեր ամենաստիպողական խնդիրը մեր դրամական տագնապն է. առանց մեր նիւթական վիճակն ապահովելու չենք կըրնար մեր իւր մարմինն մը գոյութիւնը իսկ պահպանել... Գիտեմ թէ ձեր ձեռքը հասնելիք այս 15 ոսկին շատ քիչ բան մ'է, բայց ա'լ մէկ քանի օրէն այստեղի կացութիւնը կը պարզուի եւ եթէ յաջողութիւն մ'ալ չունենանք (որ չեմ կարծեր) գէթ 20-30 ոսկիի փոխառութիւն մը կընենք եւ այս կերպով երկու երեք շաբաթ ալ կանցընենք, մինչեւ որ Ամերիկայն ալ կը շարժի վերջապէս: Իմ յոյսս մնծ է Ամերիկայի վրայ, թէ եւ մինչև. հիմա բան մը չըրին»:

Ապա խորհուրդ է տալիս եռանդուն կերպով մասնաճիւղերից փող պահանջել, բայց առանց յայտնելու իրենց տագնապալից դրութիւնը, որովհետեւ «անց»

թի (ինքն է ստորագրել) մարդը, երբ յայտնել թէ անօթի է, կը դատապարտուի անօթի մեռնելու»:

3. Ամերիկայի Հնչական Նահանգային Վարչութեան 7 Նոյեմբեր 1896 Շրջաբերականի մէջ կարդում ենք.

«Մեր նախորդ շրջաբերականաւ յոյս յայտնած էինք թէ ի մօտոյ պիտի վերսկսուին Կուսակցութեանս Կեդրոնական վարչութեան կանոնաւոր գործառնութիւնը եւ պաշտօնաթերթին հրատարակութիւնը: Ուրախ ենք այժմ, որ մեր յոյսերուն մին իրականացաւ եւ միւսն ալ շուտով կ'իրականանայ: (Դուրս է գալիս, որ վարչութեան կանոնաւոր գործառնութիւնները դեռ չեն վերսկսել... եւ Նահանգային վարչութիւնը միութարում է ամերիկեան հնչականներին «Մարտ»-ի վերսկսման իրողութիւնով միայն...)

«Կը յիշեք, անշուշտ, որ ըսինք թէ Կեդրոնական վարչութեան ծանօթ անսխալանձելի վիճակին հիմնական պատճառը անոր անդամներուն իրարմէ հեռի գտնելն էր, որոյ ալ միակ պատճառը դրամի չզոյլութիւնն էր: Գիտեք, թէ ինչպէս երբեմն միմիայն երկու հոգի մնացին Կեդրոնական վարչութեան կեդրոնավայրը, այն ալ անօթի փորով ահաւոր պատասխանատուութեանց տակ»:

(Այդ երկուսն են Տամատեան եւ Արփիաբեան, իրար հետ կուած):

«Ամենս զրկենք զիրար, բարձր պահենք կուսակցութեանս արիւնքները Դրօշակը, որոյ առջեւ խնարհին մեր անքարտաւան թշնամիները, որոնք մեր վէճքերուն մէջ իրենց սրբապիղծ հաղը կը փնտռեն. որոնք պատրաստ կանգնած կան մեր անկմանը վրայ դիւային քրքիշներ արձկելու...»

Զօրեղ կազմակերպութիւն, ծանր պարտականութիւններ... Զօրաւոր դիրք, ազգային մեծամեծ շահեր... Ցաղանդի, դրամի դասակարգեր... Տարբեր առաջնորդութեան պէտք... — դեռ շարունակում են հնչել այս հուժկու խօսքերը ընթերցողի ականջում... Բայց ուր է այս բոլորը, ուր...:

Եւ երբ մի մարմին հրապարակօրէն յայտարարում է, թէ «լուութեան մէջ աշխատելով, այնպիսի զօրաւոր դիրք մը ստացաւ, ազգային այնպիսի մեծամեծ շահեր իր պաշտպանութեանը տակ առաւ...»:

Երբ նա թիւրք փաշաներ է մէջ տեղեց վերցնում, պաշտօնատներ, դրամատներ կոխում, մարդիկ ճանճի պէս սատկեցնում աւելի հեշտ, քան դիցաբանական աժգահաները, իսկ իրականութեան մէջ ստացած գումարները իր ապրուստին ծառայեցնելով հանգերձ, շարունակում է անօթի մնալ... երբ «իր շուրջը ամբողջ հայութիւնը» բոլորելու յաւակնութիւն ցոյց տուող Կեդրոնը չի կարողանում իր ընկեր հնչականներին իրեն հետ կապւած պահել. երբ ինքը՝ այդ Կեդրոնը, անընդունակ գտնւելով իր սեփական անդամների՝ ընդամենը 5 հոգու մէջ համերաշխութիւն պահպանելու, կազմալուծւում է. երբ վերջապէս ազգային պաշտպանութեան Կեդրոնը քիչ մօտիկից նայելիս, ներկայանում է հասարակութեան առաջ իրր կեդրոն... ստամոքսային պաշտպանութեան... — քրքիշներ չէ՛, որ մենք արձակում ենք վերակազմալ կուսակցութեան անկման վերայ... չէ՛. մենք մեր զգանքն ենք արտայայտում դէպի ճոճուն խօսքերի հեղինակ վերակազմալ շառլատանը, մենք միայն խղճալ կարող ենք միամիտների այն բանակի վրայ, որ բերանը բաց «ազգային» մեծամեծ շահերու պաշտպանութիւնն է սպասում այդ թօղ փեղը «առաջնորդներին»:

(Շարունակելի)